



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ	2
22 ՆՈՅԵՄԲԵՐԸ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՕՐՆ Է.....	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	5
«Թուրքիայի ժողովուրդը հիմա պատրաստ չէ, որ 1915-ին տեղի ունեցածի անունը դրուի ցեղասպանության» ՓԱՅԼԱՆ	5
ԿԻՊՐԱՀԱՅ	6
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿ.....	6
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅ ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ	6
ՕՀԻՒ ՕՐՈՒԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ	7
ԳՈՀԱՐ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎԱԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ.....	8
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	9
ԱԶԳԱՅԻՆ ԹԷ՞ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ	9
ՈՐՈ՞ՆՔ ՊԱՏՄԱԿԱՆ-ԱՅԺՄԷԱԿԱՆ ԵՆ, ՈՐՈ՞ՆՔ՝ ՈՉ.....	9
ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ Է ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.....	13
ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ԳՈՅԱՏԵԻՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ.....	16
ԵՐԲ ՀԱՅԵՐԸ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐԻԴԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐՆ ԷՒՆ.....	17
ԿՐԿՆԱԿԻ ՍՐԲԱԴԱՍՈ՞ՒՄ ՄԸ.....	22
ՏԵՍԱԿԷՏ	27
ՍՓԻՒՌՔԻ «ԱՆԵԼԻՔ» ԵՒ ...ԿԱՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ	27
ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ԹԵԼԱԴՐԱԾ ԴԱՍԵՐԸ.....	30
ՀԻՐԱՄԵԾԱՐՈՒԹԻՒՆ, ԹԷ՞ ԼԱՒ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ.....	32
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅՈՒՇԵՐԷՍ. «ԱՅՍ ՎԻՃԱԿԸ ԱՊԱԳԱՅԻ ՉԻ ՏԱՆԻՐ ՄԵԶ».....	34
ՀԱՆԴԷՍ ՓԱՌԱՍԻՐՈՒԹԵԱՆ՝ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՎ.....	39
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	41
ՓՈԻՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ.....	41
ՅԵՏ-ԵՂԵՌՆԵԱՆ ՄԵՐ ԵՐԱԽՏԱՒՈՐՆԵՐԷՆ	44
ՎԱՀԱՆ ՊԷՏԷԼԵԱՆ ԵՐԱԺԻՇՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ	44
«ԹՈՉՈՂ ՀԱՅՐԻԿԸ». ԹԱՏԵՐԱԽԱՂ ՄԸ՝ ՈՒՐ ԾԻԾԱՂԸ ԿԸ ԹՈՉԻ ԱՌԱՆՑ ՈՏՔԻ.....	47
ՁԵՌՆԱՐԿԻ ՄԸ ՀԵՏՔԵՐՈՎ.....	49
ԿԱՆԹԵՂ ՄԸ ՄԱՐԵՑԱԻ: ՅԻՇԱՏԱԿՆ ԱՆՄԱՀ՝ ՏՈՔԹ.ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆԻՆ.....	52
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	53

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 56

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

22 ՆՈՅԵՄԲԵՐԸ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՕՐՆ Է

22 Նոյեմբեր 2025-ը Ուիլսոնեան Իրաւարար վճիռին 105-րդ տարեդարձն է:



Այս օրերուն, եւ ընդհանրապէս ալ, երբ նոր թափ կը ստանայ հայ-թրքական «հաշտեցման» խնդիրը, պետական-քաղաքական օրակարգի գլխաւոր բաղադրիչ է հայ-ատրպէճանական «խաղաղութեան» համաձայնութեան ստորագրութեան հարցը, սահմանագծման

եւ սահմանագատման պատրուակով Ատրպէճանի տարածքային ամբողջականութիւնը ճանչնալու ծուղակը ի վնաս Հայաստանի եւ Արցախի հողային իրաւունքներուն, պիտի մոռնա՞նք արդեօք Մերի պայմանագիրը եւ անկէ բխող Ուիլսոնեան իրաւարար վճիռի իրաւաթուղթը:

Անմիջապէս նշենք որ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԳ ԸՎԿԱԼ չի նշանակեր երբեք մոռնալ անցեալը, մոռնալ պատմութիւնը, մոռնալ մեր անժամանցելի իրաւունքները: ՊԵՏԱԿԱՆ ԱԶԳԸ կրնայ ի պահանջել հարկին չխօսիլ անոնց մասին տուեալ ժամանակաշրջանին, ելլելով իր գոյութեան հիմնական խնդիրներէն, բայց զանոնք Ի ՊԱՀ կը դնէ իր յիշողութեան եւ ինքնագիտակցութեան մէջ եւ երբ օրն ու պահը ներկայանան՝ զանոնք կ'արժարժէ ըստ արժանւոյն...

Հետեւաբար, մենք մեր ազգային-պետական ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ եւ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ մէջ պիտի ի պահ դնենք յատկապէս քաղաքական-իրաւական մեծ նշանակութիւն ունեցող ՈՒԻԼՍՈՆԵԱՆ ԻՐԱԽԱՐԱՐ ՎՃԻՌԸ, որ պաշտօնապէս կը ներկայացուէր 22 նոյեմբեր 1920-ին:

Կ'արժէ վերաքաղը ընել այդ օրերու պատմութեան փաստերուն:

Արդարեւ, 30 Հոկտեմբեր 1918-ին, Մուտրոսի զինադադարով՝ Օսմանեան կայսրութիւնը կը ճանչնար իր պարտութիւնը, այնուհետեւ՝ միւս երկիրները նոյնպէս, Աւստրո-Հունգարիան, Պուլկարիան եւ Գերմանիան: 1919-ի Յունուարէն սկսեալ, Փարիզի մէջ կը գումարուէր Փարիզի խաղաղութեան վեհաժողովը, որուն մէկ կողմէ կը մասնակցէին յաղթող երկիրները՝ Բրիտանիա, Ֆրանսա, Իտալիա, ԱՄՆ-ը եւ այլ, որոնց կարգին նաեւ՝ Հայաստանի Հանրապետութիւնը, իսկ միւս կողմէ, պարտուող երկիրները՝ Գերմանիան, Աւստրո-Հունգարիան, Պուլկարիան եւ Օսմանեան կայսրութիւնը:



1920 թուականի Ապրիլին, Իտալիոյ Սան-Ռեմօ քաղաքին մէջ կը կայանար Անթանթի տէրութիւններու (Անգլիոյ, Ֆրանսայի և Իտալիայի) ղեկավարներու համաժողովը, ուր կը մշակուէր եւ Օսմանեան Թուրքիոյ կառավարութեան կը ներկայացուէր յառաջիկայ հաշտութեան պայմանագրի նախագիծը: Այստեղ կը յստակեցուէին նաեւ Հայկական հարցի հետ կապուած շարք մը խնդիրներ՝ մանտադի, տարածքներու, ռազմական օգնութեան և այլն:

Եւ վերջապէս, 1920 թուականի Օգոստոս 10-ին, Փարիզի Մեր կոչուող արուարձանին մէջ, Անթանթի երկիրները սուլթանական Թուրքիոյ հետ կը կնքէին հաշտութեան պայմանագիր: Հայաստանի կողմէ պայմանագիրը կը ստորագրէր հանրապետութեան պատուիրակութեան ղեկավար Աւետիս Ահարոնեանը:

Պայմանագրի շարք մը յօդուածները կը վերաբերէին Հայաստանին: Օսմանեան Թուրքիան կը պարտաւորուէր ճանչնալ Միացեալ Հայաստանը: Հայաստանին էին անցնելու Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Պիթլիսի նահանգները ոչ ամբողջութեամբ՝ ընդամենը 90 հազար քառ. քմ. ելքով դէպի Մեւ ծով: Հայ-թուրքական պետական սահմանը որոշելու էր ԱՄՆ-ի նախագահը, Վուորօ ՌԻԻԼՍԸՆը, որ 17 Մայիս 1920-ին կու տար իր պաշտօնական համաձայնութիւնը՝ որպէս իրաւարար հանդէս գալու: ԱՄՆ նախագահը՝ յետ իրաւասու մարմիններուն եւ աշխատանքային խումբին մանրագին ուսումնասիրութեան, կը կայացնէր իրաւարար վճիռը եւ զայն պաշտօնապէս կը ներկայացնէր 22 Նոյեմբեր 1920-ին:

Եւ այսպէս, համաձայն ԱՄՆ նախագահ ՌԻԻԼՍԸՆի իրաւարար վճիռին, հայ-թուրքական սահմանը կը սկսի Իրանին սահմանամերձ Կոտուր քաղաքէն, կ'անցնի Վանայ լիճի հարաւարեւմուտք եւ Պիթլիս ու Մուշ քաղաքներէն հարաւ-արեւմուտք: Այնուհետեւ, սահմանը կը ձգուի դէպի հիւսիս, կ'անցնի Երզնկայէն ոչ հեռու...եւ կ'ապահովէ Հայաստանի անվտանգութիւնը: Հայաստանին դէպի Մեւ ծով ելք ապահովելու համար, սահմանը կ'անցնի Տերսիմէն հիւսիս: Համաձայն ՌԻԻԼՍԸՆի իրաւարար վճիռին, Հայաստանին կը տրուէր ընդհանուր առմամբ 103,599 քառ. քմ. տարածք (Ադրիւր՝ Վիքիբէտիա):

ՌԻԻԼՍԸՆի իրաւարար վճիռն առ այսօր կը մնայ չիրագործուած, քանի որ քեմալական Թուրքիան, յենուելով Խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական աջակցութեան վրայ եւ օգտուելով արեւմտեան տէրութիւններու թողտուութենէն, յամառ պայքար կը սկսէր ծաւալել՝ խախտելով Մուտրոսի զինադադարը եւ ոտնահարելով Մերի պայմանագիրը: 1920 թուականի թուրք-հայկական պատերազմի ընթացքին, Հայաստանի Հանրապետութիւնը պարտութիւն կրեց, 2 Դեկտեմբեր 1920-ին՝ յանձնեց իշխանութիւնը պոլշեիկներուն, իսկ արդէն ՀՀ օրինական իշխանութիւն չհանդիսացող կառավարութեան որոշ անդամներ հարկադրուած ստորագրեցին 1920 թուականի Դեկտեմբեր 3-ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որով փրկեցին իրենց կեանքը եւ հրաժարեցան Մերի հաշտութեան պայմանագրէն: Թուրքիոյ անունով, Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքեցին դեռեւս Թուրքիոյ օրինական իշխանութիւնը չներկայացնող անձինք: Այսպիսով, ըստ միջազգային իրաւունքի, Ալեքսանդրապոլի պայմանագիրն ի սկզբանէ անօրինական էր եւ անվաւեր:



Կարեւորութեամբ պիտի նշենք որ Իրաւարար վճիռը վերջնական է եւ պարտադիր կատարման համար: Անիկա չունի ժամանակային սահմանափակում, եւ անոր կարգավիճակը կախում չունի վճիռին հետագայ ճակատագրէն: Ըստ միջազգային իրաւունքին, կողմերը, համաձայնելով իրաւարար որոշումին ներկայացնել իրենց վէճը, մէկընդմիջոյ կ'ընդունին, որ իրենց կողմէ կատարման համար պարտադիր կ'ըլլայ իրաւարարի ցանկացած վճիռ: ՈՒԻԼՍԸՆԻ իրաւարար վճիռը պարտադիր է բոլոր հայցուորներուն համար, որոնք ներկայիս հետեւեալ երկիրներն են՝ Միացեալ Թագաւորութիւն, Գանատա, Աւստրալիա, Նոր Զելանտիա, Հարաւային Ափրիկէ, Հնդկաստան, Փաքիստան, Պանկլատշ, Ֆրանսա, Իտալիա, Ճաբոնիա, Պելճիքա, Յունաստան, Լեհաստան, Փորթուգալիա, Ռումինիա, Չեխիա, Սլովաքիա, Սերպիա, Խորվաթիա, Սլովենիա, Պոսնիա, Հերցեկովինա, Մակեդոնիա եւ Մոնթենեկրո: Անիկա պարտադիր է նաեւ իրաւարարին՝ Միացեալ Նահանգներու համար, քանի որ ԱՄՆ նախագահի ցանկացած պաշտօնական դիրքորոշում կը հանդիսանայ երկրի դիրքորոշումը եւ իրաւարարութենէն բխող քայլերը պարտադիր են կատարման համար: Ի դէպ, իրաւարար վճիռը կը կրէ ԱՄՆ-ու պաշտօնական մեծ կնիքը:

Ուիլսընեան վճիռը իրաւամբ Հայոց Պատմութեան մեծագոյն ռազմավարական յաղթանակներէն մէկն է, որ թէեւ կեանքի չկոչուեցաւ վերոնշեալ պայմաններու բերումով, սակայն անիկա մեր Պահանջատիրութեան Դատին կու տայ միջազգային օրէնքի իրաւական ոյժ եւ կը հաստատագրէ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանի իրաւական տեսլականը:

Դժբախտաբար, վերանկախացած Հայաստանի յաջորդական ղեկավարները արժանի կշիռը չտուին երբեք Ուիլսընեան իրաւաբուրժին, Արեւմտեան բռնագրաւուած Հայաստանի հայկական իրաւական տիրոջ իրաւունքին, որ նուիրագործուած է Ուիլսընեան իրաւաբուրժով, այլ ընդհակառակն՝ 2008-ին կնքեցին Հայաստան-Թուրքիա տիրաւորչակ արձանագրութիւնները, որպէս արդիւնք Մերժ Սարգսեանի վարած ֆութպոլային դիւանագիտութեան: Եւ հիմա ալ՝ հետամուտ են հաստատել «բարիդրացիական յարաբերութիւններ» հայաստան թուրքին հետ, ինչ որ ուրացումն ու ժխտումն է հայ Պահանջատիրութեան Դատին եւ թուրք-ազերական ծուղակին յանձնուելու ՅԱՆՁՆՈՒՈՂԱԿԱՆ քաղաքականութիւն է:

Պատմաբան, վերլուծաբան Դոկտ.Արմէն Այվազեան դիպուկ կերպով կ'արձանագրէ. « Եթէ ՀՀ-ն չլռէր Արեւմտեան Հայաստանի թուրքական օկուպացիայի (բռնագրաւման) մասին, Թուրքիան չէր համարձակուի մեղադրել հայերին Արցախն օկուպացնելու մէջ»:

Աւելին, ան կը նշէ իրաւացիօրէն որ Ատրպէյճանի, ապա եւ Թուրքիայի հետ հապշտապ, ոտքի վրայ «խաղաղության պայմանագիր» ստորագրելը՝ հրաժարիլ է սեփական պատմութենէն, ազգային արդար իրաւունքներու պաշտպանութենէն եւ թուրք-ատրպէյճանական չընդհատուելիք յարձակումներուն որեւէ դիմադրութիւն ցոյց տալէն: Ան հաւասարագոր է սեփական ստորագրութեամբ՝ Օսմանեան կայսրութեան մէջ եւ անոր իրաւայաջորդ ֆաշիստական Թուրքիոյ մէջ 1893-1923 թթ. իրականացուած Հայոց ցեղասպանութեան հետեւանքները օրինականացնելուն:

Եթէ ԻՐԱԿԱՆ կամ ԱՅՍՕՐՈՒԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ աշխարհագրական տարածքը 29, 743 քառ. քմ. է, ապա մեր պատմական յիշողութենէն պիտի չջնջենք ԵՐԲԵՔ որ ԻՐԱԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ վերոնշեալ իրաւովճիտով հաստատագրուած ՈՒԻԼՍԸՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ է, որ կը շարունակէ ըլլալ ՄԻԱՅԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱԴԹԱԹՈՒՂԹՆ ու ԻՐԱԻԱԹՈՒՂԹԸ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶԲՐՈՅՑ

«Թուրքիայի ժողովուրդը հիմա պատրաստ չէ, որ 1915-ին տեղի ունեցածի անունը դրուի ցեղասպանութիւն» ՓԱՅԼԱՆ

05/11/2025

Եթէ Ալիեւը անհամաձայնութիւն չայտնի, յունուարին հայ-թուրքական սահմանը կը բացուի երրորդ երկրների քաղաքացիների համար: Յոյս ունեն, որ մի քանի ամիս յետոյ սահմանը կը բացուի Հայաստանի եւ Թուրքիայի քաղաքացիների համար, լրագրողների հետ զրոյցում այսօր ասաց Կարօ Փայլանը՝ միաժամանակ յոյս յայտնելով, որ յունուարին դրական զարգացումներ կարող են լինել նաեւ Թրամփի ուղու հարցում:



Հարցին՝ ինչպե՞ս կարող են հայ-թուրքական յարաբերութիւնները կարգաւորուել, եթէ Թուրքիան շարունակում է պաշտօնապէս ժխտել Հայոց ցեղասպանութիւնը, Փայլանը պատասխանեց՝ իր տատը եւ հայրը մահացել են առանց պատմական արդարութեանն ականատես լինելու:

«Ես չեմ ուզի մեռնել առանց պատմական արդարութեանն ականատես լինելու: Եթէ ապագայ չունես, յարաբերութիւններ չունես, եթէ դուռը փակ է, ինչպե՞ս կարող ես անցեալի համար երկխօսութիւն սկսել: Կարծում եմ՝ յարաբերութիւններ ունենալով՝ կը կարողանանք կառուցել ապագան: Դրանից յետոյ աւելի հեշտ կը լինի անցեալի մասին խօսել:

Զպէտք է արդարութիւն փնտրենք Վաշինգտոնում կամ Փարիզում: Արդարութիւնը պէտք է մեր տարածաշրջանում գտնենք, եւ երկխօսութիւնով ամէն ինչի աւելի հեշտ կարելի է հասնել: Թուրքիայի ժողովուրդը հիմա պատրաստ է ասելու, որ վատ իրադարձութիւններ ենք ապրել 1915-ին, բայց պատրաստ չէ, որ դրա անունը դրուի ցեղասպանութիւն: 110 տարի ի վեր բոլորս էլ կորցրել ենք՝ հայերն էլ, թուրքերն էլ», - ասաց Փայլանը:

Աղբիւր՝ ԱԶԳ

ԿԻՊՐԱՀԱՅ



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ

ՈՒՐԲԱԹ 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025

17:30 «Հրաշափառ» եւ Աջահամբոյր,
Լառնաքայի Ս. Ստեփաննոս եկեղեցի

ՇԱԲԱԹ 6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025

10:00 Հանդիպում կիպրահայ կազմակերպութիւններու
ներկայացուցիչներու հետ:

11:00 Հանդիպում Կիպրոսի եկեղեցիներու Պետերու
հետ:

12:30 Հանդիպում Կիպրոսի Թեմի Ազգային
Իշխանութեան հետ:

19:00 Յորեկինական Պաշտօնական Ճաշկերոյթ,
«Հիլթըն» պանդոկ:

ԿԻՐԱԿԻ 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025

9:30 Ս. Պատարագ եւ Հայրապետական Պատգամ,
Ս. Աստուածածին մայր եկեղեցի:

11:30 Աջահամբոյր,

Ազգային Առաջնորդարանի դահլիճ:

17:00 Պաշտօնական Այցելութիւն Հ.Հ. Դեսպանատուն:



19:00 «Հրաշափառ» եւ Աջահամբոյր,
Լիմասոլի Ս. Գէորգ եկեղեցի:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 8 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025

10:00 Պաշտօնական Այցելութիւն
Հանրապետութեան Նախագահին:

11:00 Պաշտօնական Այցելութիւն

Կիպրոսի Արքեպիսկոպոսին:

12:00 Այցելութիւն Նիկոսիոյ Նարեկ Վարժարան:

ՕՉԻ ՕՐՈՒԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ



Հոկտեմբեր 28, "ՕՉԻ"-ի տօնին առթիւ Կաթողիկոսական Փոխանորդ Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոսը, ընկերակցութեամբ Երեսփոխանական Ժողովի Ատենապետ Վահան Այնէճեանի, Արքեպիսկոպոսարանի Ապոստոլոս Վառնավաս եկեղեցոյ մէջ ներկայ գտնուեցաւ գոհաբանական աղօթքին եւ ետքը՝ Յունաստանի դեսպանատան առջեւ՝

ուսանողական- աշակերտական տողանցքին, որուն մասնակցեցաւ նաեւ Նարեկ վարժարանի միջնակարգի աշակերտութիւնը: Սրբազան Հայրը այս առթիւ շնորհաւորեց Յունաստանի նորանշանակ դեսպան Կոնստանտինոս Կոլլիասին եւ կարճ զրոյց մը ունեցաւ անոր հետ:



Զուգահեռաբար, Երկուշաբթի 27 Հոկտեմբեր 2025-ին, ժամը 12:15-ին, յատուկ հանդիսութեամբ նշուեցաւ 1940-ի Հոկտեմբեր 28-ի Օհի-ի օրը, Նիկոսիոյ Նարեկ Վարժարանին մէջ: Միջնակարգի աշակերտները արտասանութիւններով, երգերով եւ տրամախօսութեամբ ոգեկոչեցին Յոյն ժողովուրդի դիմադրականութիւնը եւ պատուեցին թշնամիին վերջնագրին "ՈՉ" պատասխանող 1940-ի հերոսները:

Զեռնարկին ներկայ եղան Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Տ. Կոմիտաս Արք. Օհանեան, Հ.Հ. արտակարգ եւ լիազօր Դեսպան Ն.Վ. Իննա Թորգոմեան, հայ համայնքի Պետական Ներկայացուցիչ՝ Վարդգէս Մահտեսեան եւ հիւրեր:

ԳՈՀԱՐ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎԱԽԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ



Կիրակի 16 Նոյեմբեր 2025-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, կիպրահայութիւնը գեղեցիկ առիթը ունեցաւ դիտելու Կարէն Գազանճեանի պատրաստած ԳՈՀԱՐ գրադարանի գիրքերու հարուստ հաւաքածոյի մասին վաւերագրական ֆիլմը՝ Նիկոսիոյ «Royal Hall» սրահին մէջ։ Ներկայ էին Թեմիս Կաթ. Փոյի. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեան, Արժանապատիւ Տէր Մովսիկ աւագ քահանայ Հապէշեան, Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեան, Թեմական, Վարչական, ազգային, կրթական կազմակերպութեանց եւ կառոյցներու ներկայացուցիչներ եւ կիպրահայ հանրութեան անդամ-անդամուհիներ։

Բացման խօսքով հանդէս եկաւ Պրն. Յակոբ Գազանճեան, որ հանգամանալից կերպով անդրադարձաւ ֆիլմը ստեղծելու մտայղացումին մասին, որուն

իրականացման համար իր ամբողջական զօրակցութիւնը յայտնել էր ԳՈՀԱՐԻ գլխաւոր հիմնադիր Տիար Յարութ Խաչատուրեանը։ Ապա անդրադարձաւ ԳՈՀԱՐԻ հայապահպանման գծով տարած հսկայական, վիթխարի աշխատանքին՝ հայ երգը, հայ գիրն ու հայ գիրքը քաջալերելու գծով, զանոնք տարածելու աշխարհի չորս ծագերը, նոր կեանք ու շունչ տալու անոնց, որպէս ազգի գոյութեան ու յարատեւման հիմնասիւնները...



Ներկաները հիացումով դիտեցին ԳՈՀԱՐ գրադարանի վիթխարի հաւաքածոն, որ կ'ընդգրկէ բառարաններ, երգարաններ, յուշամատեններ եւ այլ գիրքեր, թիով աւելի քան 4500, ...հատիկ-հատիկ խնամքով եւ հոգածութեամբ հաւաքուած, է՛ջ առ է՛ջ վերանորոգուած անոր կազմատան մէջ եւ ամենայն բժախնդրութեամբ դասատրուած ԳՈՀԱՐԻ շքեղ գրադարանի

ցուցափեղկերուն մէջ՝ մատչելի հետազօտողին եւ անոնցմով հետաքրքրուող անձանց։

Երեկոյի յայտագրին մաս առին Սիլվա Մաքամեան՝ «Երագ» եւ «Բարի Արագիլ» երգերու սրտառուչ մեկնաբանութեամբ, Ռոպերթ եւ Յասմիկ Յովհաննէսեաններ՝ «Ալ Այլուդ»,

«Շողեր ջան» եւ «Էրզրումի Շորոր» Կոմիտասեան յօրինումներու ջութակի հոգեյոյզ նուագով: Հանդիսականները նաեւ առիթը ունեցան վայելելու ԳՈՀԱՐԻ համերգներէն մասեր, որոնք անմահացուցին հայ երգը ի սփիւռս աշխարհի:

Ձեռնարկի աւարտին, սրտի խօսք արտասանեց Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արքեպիսկոպոսը, բարձր գնահատելով անոր կազմակերպիչները՝ Տէր եւ Տիկ. Յակոբ Գազանճեանները եւ իրենց որդին՝ ֆիլմի արտադրիչ Կարէն Գազանճեանը, յայտագիրը ճոխացնող երաժիշտները եւ մասնաւորաբար ԳՈՀԱՐ ընտանիքը, որ ամէն ճիգ ի գործ կը դնէ՝ նիւթաբարոյական թէ այլ, յաւերժացնելու համար հայ երգը, հայ գիրն ու հայ գիրքը, անոնց շունչն ու ոգին, անոնց կենարար, հայակերտ եւ հայապահպան ընթացքը:

«Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ այս յոյժ հետաքրքրական միջոցառումը, որմէ ետք ընդունելութեան սրահին մէջ շարունակուեցաւ անոր հայաշունչ ու ջերմիկ մթնոլորտը...ԲՈԼՈՐԻՆ ՎԱՐՁՔԸ ԿԱՏԱՐ: Ե.Գ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԹԷ՞ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՈՐՈ՞Ք ՊԱՏՄԱԿԱՆ-ԱՅԺՄԷԱԿԱՆ ԵՆ, ՈՐՈ՞Ք՝ ՈՉ



ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ

Հայ ժողովուրդը, իր բազմադարեան պատմութեան ընթացքին, եթէ մինչեւ 1375 թուականը ունեցած է իր թագաւորութիւնը(ները), սակայն, յետայնու զրկուած էր այդ կարելիութիւններէն, բայց, մնացած էր կանգուն ու գոյատեւած, մինչ ուրիշ ժողովուրդներ շուտով ձուլուած, անհետացած ու շոգիացած են, առանց որ կարենան «կենդանի» հետք մը ձգել իրենց

ետին:

Սակայն, հայ ժողովուրդը տոկացած է, դիմացած, առանց ուժի ու հզօրութեան մնալով իր արմատներուն եւ ակունքներուն հարազատ ժառանգորդը, ի դէմս իր շուրջ վիտացող թշնամիներուն ու հարեւաններուն, որոնք առիթ չէին փախցնէր զինք կուլ տալու, բռնագրաւելու կամ ճզմելու, ամէն տեսակի եւ առիթի միջոցներով զայն իրենց մականին տակ առնելու, թէկուզ աստոնք ըլլային զաւթումներու, ջարդերու կամ տեղահանումներու ճամբով:

Անշուշտ, այդ շահադիտական, բռնատիրական ու սպառնամէտական փորձերը, միշտ ալ շարունակուեցան, կրկնուեցան ու նորոգուեցան, բայց, հայ ժողովուրդը, երբեք տեղի չտուաւ, այլ կառչած մնաց իր լինելիութեան ու գոյութեանականութեան հաւատամքին, ամենայն վճռակամութեամբ, խոհականութեամբ եւ իրատեսութեամբ:



Վստահաբար, այդ երթին եւ ուղիին, կամքին ու տեսիլքին մէջ, աշխարհիկ կողմերը, չէին կրնար «փրկարար» տեղ մը ունենալ կամ ազդեցիկ դեր մը խաղալ, որովհետեւ, անոնք չունէին պաշտպանուելու հնարաւորութիւններ, ոչ ալ ի վիճակի էին հանդէս գալու պաշտպանողական կամ դիմադրական հակադարձութիւններով:

Սակայն, այդ «բաց»ը կրցաւ համարել ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ, որ հակառակ իր չունեցած պետականութեան եւ իշխանութեան, առաւել՝ իր նկատմամբ ոչ-համաժողովրդական լիակատար ժողովրդականութեան, բայց, կրցաւ դառնալ այն «փարոս»ը, որ հայ ժողովուրդին տէր կանգնելու եւ անոր զօրավիգ մնալու ազդու ներկայութեան մը մէջ յայտնուեցաւ:

Իսկ այս խօսուն իրականութիւնը, դարձաւ ու վերածուեցաւ հայ ժողովուրդին համար իսկական փրկարարութեան «լաստ»ի մը, որ կրնար իր «hoս»ը պահել ու խնամել, սնուցանել եւ առաջնորդել, կենդանացնել եւ առողջացնել, այն հիմունքներով ու հայեացքներով, որ հայ ժողովրդը կ'ապրի ու կը գոյատեւէ, յանուն իր հոգեկան ու մշակութային եւ ի սպաս իր ինքնութեան եւ ազգայնականութեան յարատեւութեան:

Այս մտորագրումը, զոր սկսայ ու բարձրաձայնեցի, ոչ առաջինն էր, ոչ ալ կրնայ ըլլալ վերջինը, այնքան ատեն, որ հարցը կը վերաբերի հայ ժողովուրդին քաղաքական-գաղափարական, համայնքային-գաղութային ընտրանքներուն ու կացութեանը, ուր՝ հայ ժողովուրդը, հայրենիք թէ սփիւռք, ապրած է խայտաբղետ կեանք մը, իր զանազան երանգներով ու դրոշմներով:

Ուրեմն, թափանցելու կամ բացայայտելու համար, թէ այդ ուղիով եւ երթով, ո՞ւր կարելի է գտնել այն Հայաստանը, հայերնի քը, որուն ձգտած է հայ ժողովուրդը, դարերէ ի վեր, հասնելու իր անկախութեան երազանքին, ապա, իրականացումին, ինքնին ապացոյց էր, ակնյայտօրէն, թէ ան կը մնայ իր հայրենիքի անկախութեան զինուորագրեալը, երբ որ՝ ըլլայ, երբ որ՝ իրականանայ, երբ որ՝ հասունանայ:

Սակայն, պատմութիւնը այնքան ալ հեշտ չէր, ոչ ալ՝ հեզագնաց, որ մէկ «ոստում»ով, կարելի ըլլայ անկախութիւն ձեռք ձգել, ապա, տէր դառնալ եւ, ամենէն կարելորը, կարելի ըլլալ զայն պահել, արժանիօրէն, համայնականօրէն զօրավիգ կանգնելով անոր, ուռճացնելով ու բարգաւաճեցնելով զայն:

Սակայն, պայմաններն ու ժամանակները, իրօք, դաժան եւ անխնայ էին, թէ՛ Օսմանեան, թէ՛ Կովկասեան կայսրութիւններու շուրթին տակ, ուր տոկալն ու համակերպիլը, դիմանալն ու դիմադրելը, համարեա անհնար եւ անկարելի էին:

Այնուամենայնիւ, հայ ժողովուրդը, իր երկու հատուածներով, կրցաւ, համեմատութեան ու չափաւորութեան եզրոյթներով, տեղ մը պայքարիլ, ուրիշ տեղ մը՝ շաղուիլ, թրքական թէ ռուսական բեւեռներուն վրայ:

Արդարեւ, եթէ Օսմանեան լուծը ծանր էր, անողոք ու մահաբեր, Ռուսականը, աւելի մեղմ էր, տանելի եւ ընդունելի, այդուհանդերձ, երկու պարագաներուն ալ, հայ ժողովուրդը կը գտնուէր «կաղապարուած» վիճակի մը մէջ, թէւ առաջինը զայն բնաջնջելու հետքի մէջ էր, իսկ երկրորդը՝ զայն իր շրջագիծէն ներս առնելու (կամ պահելու) տրամադրութեան տակ:

Անկասկած, թրքական տարբերակը եւ ռուսականը նոյն չափանիշներով կարելի չէր կշռել, պարզապէս անոր համար, որ առաջինը ԶՈՒՏ հալածողական էր, իսկ երկրորդը՝ մեղմական, բայց, երկու պարագաներուն ալ, կար բացայայտուած ու քողարկուած վերաբերմունք մը հայութեան նկատմամբ, ինչ որ ցոյց կու տային այդ կայսրութիւններու



թշնամական-բարեկամական ձգտումները, մերթ «եաթաղան»ով խօսելու, մերթ «սիրաշահելու» ոճով հասկցնելու ու հասկցուելու պայմաններով:

Պատմութեան անիւր այնպիսի թափ ստացաւ, որ Արեւմտահայութեանը ընթացաւ դէպի շատ աւելի սուր եւ անհաշտ, վայրագ ու չարաշուք ճակատագիրով, յանգելու համար ցեղասպանութեան ու տարագրութեան արհաւիրքային հոսքին, իսկ Արեւելահայութիւնը, թէեւ չընթացաւ կամ չինկաւ նման խստաբարոյ սեւաբախտութեան մէջ, բայց, Դամկլէան սուրը կախուած էր բոլորին ճիտէն ու գլխէն:

Զոյգ վեհաժողովները, որոնք յաջորդաբար տեղի ունեցան եւ Հայկական Հարցն ալ դրուած էր սեղանի վրայ, որպէս օրակարգ, ոչ միայն որեւէ արդիւնքի կամ յոյսի նշոյլ չտուին, այլ՝ աւելի ահաւորը՝ ոչինչով օգնեցին հայութեան պահանջներուն, ընդհակառակը՝ ՎԱՐԿԱԲԵԿԵՅԻՆ անոր իրաւունքն ու արժանապատուութիւնը, մինչեւ որ՝ Խրիմեան Հայրիկը, Պերլինի վեհաժողովէն դուրս եկաւ (լքե՛ց) հիասթափուած, որ յոյս պէտք չէ դնել օտարներուն վրայ (չկա՛յ), այլ պէտք է դիմել ուժի. «միայն զենքով կայ փրկութիւն»:

Ասիկա եղաւ ԴԱՍ մը հայութեան, աջ ու ձախ դուռ չգարնելու, չմուրալու օգնութիւն եւ ողորմութիւն, որովհետեւ այդ ընտրանքը եղած է ու կը մնայ մահացու:

Ինչո՞ւ այս արագ ու հպանցիկ մէջբերումն ու վկայութիւնը, որովհետեւ Արեւմտահայութեան ԳԻՏԱԿԻՅ եւ ՅԱՆՁՆԱՌՈՒ մտաւորականութիւնը ճի՛շդ կողմնորոշում եւ արեւելում նկատած էր այդ ուղիին գործնական հեռանկարութիւնը, պայմանաւ որ՝ հայութիւնը օժտուի գաղափարական դաստիարակութեամբ, լիցքով, համոզկերութեամբ ու վճռակամութեամբ:

Բնական է, այդ ընտրանքը ի՞նչ կրնար ըլլալ, եթէ ոչ ազգային- գաղափարական ուսմունքը, կուսակցական դպրոցն ու վարդապետութիւնը, գաղափարախօսական- գաղափարաբանական հիմունքներով ու սկզբունքներով:

Առաջին ԱԶԴԱՆՇԱՆԸ տրուեցաւ Վանէն ու Մարսէլին, երբ երեք Մկրտիչներու (Խրիմեան Հայրիկ, Փորթուգալեան, Աւետիսեան) տեսիլքով, խորհուրդով, գործակցութեամբ եւ իրատեսութեամբ, 1885ին, Վանի մէջ ծնունդ տուին ԱՐՄԵՆԱԿԱՆ կուսակցութեան, որուն ամբողջ տեսութիւնը ու գաղափարախօսութիւնը ժառանգուեցաւ, յետագային, Ռամկավար Ազատական Կուսակցութեան (1 Հոկտեմբեր 1921), ի Պոլիս:

Այսպէս ծնունդ առին ազգային-քաղաքական կազմակերպութիւնները (ՄԴՀԿ, ՀՅԴ եւ ՌԱԿ), որոնք ամբողջ Արեւմտահայութեան (իմա՝ սփիւռքահայութեան) առաջնորդութեան, կազմակերպութեան ու ղեկավարութեան պարտականութիւններն ու պարտաւորութիւնները իրենց վրայ վերցուցին ու մինչեւ օրս ալ կը մնան այդ դիրքին ու պատնէշներուն վրայ:

Ճիշդ է, այդ քաղաքական-գաղափարական կառոյցներուն միջեւ կապերը եւ յարաբերութիւնները միշտ չեն եղած հեզասահ կամ բարեկամական, բայց, կարելի չէ ուրանալ նաեւ, որ անոնք իրենց ներդրումներով, համախոհութեամբ ու համագործակցութեամբ, զգալի ու գովելի դերակատարութեան մէջ գտնուած են, յատկապէս վերջին քանի մը տասնամեակներուն:

Այս յօդուածով ու հրապարակագրութեամբ, պիտի չխօսիմ կամ անդարդառնամ սփիւռքահայ նման կազմակերպութիւններու գոյավիճակին մասին (յաճախ առիթը ունենալով ու հրապարակելով իմ տեսակէտներս) առանց դրժելու կամ շրջանցելու



անոնց երկկուան դերին ու նպաստին եւ այժմու մակընթացութիւններուն ու խարխափումներուն, մեղմ ըսած, մտահոգիչ ընթացքին ու երթին, իրենց զանազան երեւեջներով ու տեղաշարժերով:

Սակայն, երբ այս առընչութեամբ կը դիտենք ու կը հետեւինք ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ կուսակցութիւններու առկայութեան գոյերթին ու գործունէութեանց ալիքներուն, միայն ցաւ ու զարմանք կը զգանք, թէ այդ ի՞նչ սնանկութեան ու փուճութեան չափանիշներով անոնք կան, կը գործեն, այնքան ատեն որ ոչի՛նչ կը ներկայացնեն եւ ոչի՛նչով կը նշանաւորուին, բացի ըլլալէ՝ պատահականութեան, արկածախնդրութեան, պատեհապաշտութեան եւ անցողիկանութեան... փուշիկներ:

Վերջին հաշուով, ի՞նչ նշանակութիւն կամ արժէք ունի «փոքր» հանրապետութեան մը համար, որ կը հաշուէ շուրջ երեք միլիոն (՝) բնակչութիւն, ունենալ աւելի քան ՀԱՐԻԻԿ կուսակցութիւն, որո՞ւն ի՞նչ ըսելու կամ ի՞նչ համոզելու համար:

Հսկայ Ամերիկան, իր բազմամիլիոն բնակչութեամբ, ունի ԵՐԿՈՒ կուսակցութիւն՝ Դեմոկրատական եւ Հանրապետական, ճիշդ թէ՛ սխալ, շատ թէ՛ քիչ, այդ երկուքն են, որ կը տիրեն ներամերիկեան եւ արտասահմանեան ծիրերէն ներս:

«Պուճուր» Հայաստանի՞ն ինկած է, բազմակուսակցականութեան համակարգ ստեղծել, յանուն՝ ինչի՞ եւ որո՞ւ, երբ ատոնք ոչ մէկ ազդեցութիւն ու դերակատարութիւն ունեցած են (եւ ունին), ինչպէս օրինակ Սերժ Սարգսեանի «Հանրապետական»ը, որ, օրին, 80 հազար անդամ ուներ, իսկ այսօ՞ր, գրեթէ... զերոյի հաւասար է:

Հայաստանի Հանրապետութիւնը պէտք ունի՞ տականքներով, ստահակներով, բախտախնդիրներով ու շահադէտներով կազմուած կուսակցութիւններու, որոնց բերած աղէտները, վտանգները ու ցնցումները, մինչեւ օրս հայրենիքը վերածած են անձնական «կթան կով»երու, ու զայն վերածած՝ անսանձելի... ըմբշամարտի:

Մեր այս կատարած մատնանշումները, երբեք քննադատական չեն ու չեն ալ միտիր նման վարկածի, այլ՝ հայրենիքը տեսնելու, իր ԻՍԿԱԿԱՆ ժողովրդավարական հարթակներու վրայ եւ ոչ թէ... պատահական կամ ներանձնական:

Աւելի քան երեսուն տարուան անկախութիւնը, շատ բարեփոխութիւններ ու բարօրութիւններ բերաւ, բայց, բերաւ նաեւ անկարգապահութիւններ, զրպարտութիւններ, անիրաւութիւններ ու գայթակղութիւններ:

Ժամանակը չէ՞, աւելի քան քիչ մը սթափելու ու դուրս գալու թունաւոր թմբիրէն, որպէսզի այն Հայաստանը, որուն մասին կը խօսուի, կ'երագուի ու կը պահանջուի, դառնայ ԻՍԿԱԿԱՆ Հայաստան, ոչ անուանումով, այլ՝ իր էութեամբ:

Այլապէս, ներկայ տրամաբանութեամբ այժմու դիտողականութեամբ եւ ընդհանրապէս գործող տեսաբանութեամբ, պէտք է հասկնալ, ըմբռնել եւ արձանագրել, որ՝ սփիւռքահայ կուսակցութիւնները, առանց պետութեան ու պետականութեամբ, վիթխարի դեր կատարեցին՝ հայապահպանումի փշոտ ուղիներէն ներս, հետեւաբար, Հայաստանը, եթէ պիտի մնայ նման շինիչ ուղիի մը վրայ, պարտի թօթափուիլ ու ձերբազատուիլ... ցնցոտիներու հոգեբանութենէն ու լծուիլ իսկական կառուցողական ու շինարարական գաղափարական դպրոցներու կերտումին, որուն այնքան կարիքն ու հրատապութիւնը կայ:

(Պէյրութ)

19/10/2025

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ Է ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Վարդան Թաշճեան, Պէյրութ, 27 հոկտեմբեր 2025, ԳԵՂԱՐԴ

“Այսքա՛ն կ’աշխատինք կոր՝ բայց մեր մասին գրող պիտի ըլլա՞յ”



ՎԹ

Պատմութիւնը միայն անցեալի դէպքերու գրանցումը չէ. ան կարելորդ մասն է այն բանին, թէ ինչպէս կը հասկնանք ներկան ու ինչպէս կը պատկերացնենք ապագան:

Ժամանակակից կեանքին եւ քաղաքականութեան մէջ պատմութիւնը, եւ մանաւանդ անոր մեկնաբանութիւնը, էական դեր կը խաղան քանի մը հիմնական պատճառներով:

Նախ, պատմութիւնը կը ձեւաւորէ ազգային ինքնութիւնը եւ հաւաքական յիշողութիւնը: Ամէն ազգ, համայնք կամ քաղաքական խումբ իր ինքնութեան մէկ կարելորդ մասը կը կառուցէ պատմութեան որոշ մեկնաբանութեան մը շուրջ: Պայքարի, յաղթանակի, զոհողութիւններու կամ ձեռքբերումներու պատմութիւնները, որոնք հասարակութիւն մը կը պատմէ իր անցեալին մասին, կ’օգնեն պատասխանելու էական հարցումներու՝ «ո՞վ ենք մենք», «ո՞վ են անոնք» եւ «ի՞նչ արժէքներու համար կ’արժէ պայքարիլ»: Այս պատումներն են, որ կրնան միացնել ժողովուրդ մը, տալ նպատակներ անոր եւ արդարացնել քաղաքական դիրքորոշումներ ու ազգային երազանքներ:

Երկրորդ՝ պատմութիւնը բաւականին լուրջ «տեղեկատու» մըն է, որուն կը դիմուի հանրային քաղաքականութիւն մշակելու եւ որոշումներ ընդունելու համար: Քաղաքականութիւն մշակողները յաճախ կը դիմեն պատմական նախադէպերու, երբ կը փորձեն հիմնաւորել իրենց ընտրութիւնները: Օրինակի համար, կառավարութիւն մը կրնայ արդարացնել արտաքին զինուորական միջամտութիւն մը՝ յղում կատարելով անցեալ պատերազմի մը դասերուն, կամ ալ խթանել ընկերային բարեփոխումներ՝ յիշեցնելով պատմական անարդարութիւններ: Պատմութիւնը մեր տրամադրութեան տակ կը դնէ դրական եւ բացասական նախադէպերու «գրադարան» մը, որ կը ձեւաւորէ քաղաքական բանավեճերը եւ օրէնսդրական նախաձեռնութիւնները:

Պատմութիւնը կրնայ նաեւ օգտագործուիլ կամ չարաշահուիլ իշխանութեան համար: Քանի որ պատմական պատումները ուժեղ են եւ խոր ազդեցութիւն ունին, անոնք կրնան նաեւ «մանիփուլացուիլ»: Ինքնակալ վարչակարգեր յաճախ կը փորձեն վերահասանելի դարձնել պատմութիւնը՝ զայն վերաշարադրելով ըստ սեփական «ճաշակին»: Անոնք միակողմանի կը ներկայացնեն պատմութիւնը՝ իրենց օրինականութիւնը զօրացնելու կամ այլախոհութիւնը լռեցնելու նպատակով: Ժողովրդավարական ընկերութիւններուն մէջ այս գէնքը կրնայ օգտագործուիլ շատ աւելի լայն շրջանակներու կողմէ. քաղաքական գործիչներ կրնան ընտրովի կերպով օգտագործել փաստերը՝ հանրային կարծիքին վրայ ազդելու եւ սեփական պատկերացումները յառաջ մղելու համար: Պատմութեան ներկայացման վրայ



վերահսկողությունը կրնայ վերածուիլ գործիքի մը, որուն նպատակն է ազդել հասարակութեան մտածողութեան վրայ եւ կողմնորոշել, թէ ով յօգուտ որուն պիտի քուէարկէ ընտրութիւններուն:

Պատմութիւնը կը խթանէ քննադատական մտածողութիւնը եւ ուժեղ դերակատար մըն է իրազեկուած քաղաքացիական հասարակութիւն ձեւաւորելու մէջ: Պատմութեան ուսուցումը կը սորվեցնէ մարդուն՝ գտել աղբիւրները, քննութեան ենթարկել ապացոյցները, հաշուի առնել բազմազան դիտանկիւններ եւ հասկնալ պատճառահետեւանքային կապերը ժամանակի հոլովոյթին մէջ: Այս բոլորը հիմնական կարողութիւններ են՝ մանաւանդ ապատեղեկատուութեամբ եւ քաղաքական բեւեռացումով յատկանշուող մեր դարաշրջանին մէջ:

Պատմութիւնը կ'օգնէ անդրադառնալու անարդարութիւններուն եւ հարթելու բաժանումները: Պատմութեան մեկնաբանութիւնը առանցքային է անցեալի աղէտներու՝ ցեղասպանութեան, հայրենազրկման, գաղութատիրութեան կամ համակարգային խտրականութեան նկատմամբ ըմբռնում ձեւաւորելու եւ նման իրավիճակներու տանող զարգացումները դիմագրաւելու կամ յաղթահարելու գործընթացին մէջ: Արդարութեան ձգտող ժամանակակից շարժումները յաճախ կը սկսին պատմական նիւթերու վերագնահատումով: Յաւուտ իրականութիւններու կամ ռճիրներու հանրային ու պետական ճանաչումները, փոխհատուցումները եւ յիշատակի ձեռնարկները կը դասուին շարքին այն ձեւերուն, որոնցմով հասարակութիւնները կ'օգտագործեն պատմութիւնը՝ դժուար ճշմարտութիւններու հետ առերեսուելու եւ աւելի ներառական ապագայ մը կառուցելու համար:

Ի վերջոյ, պատմութիւնը կը կապէ համաշխարհայինն ու տեղականը: Մեր փոխկապակցուած աշխարհին մէջ, պատմական իրադարձութիւններուն ընկալումը՝ ցեղասպանութիւնները, բնիկ ժողովուրդներու հայրենազրկումները, ցեղային զտումները, կամ միջազգային հակամարտութիւնները, կ'օգնէ հասկնալու, թէ ինչու երկրագունդի որոշ շրջաններ հարուստ են, իսկ ուրիշներ՝ աղքատ կամ անկայուն: Նոյն կերպով, պատմութիւնը ի ցոյց կրնայ հանել փաստեր, թէ ինչպէս տեղական խնդիրները իրենց արմատներով կը գտնուին անցեալին մէջ:

Ուրեմն, պատմութիւնը նաեւ այն մասին է, թէ ինչպէս կը կիրառենք անցեալը: Ժամանակակից կեանքին ու քաղաքականութեան մէջ պատմութեան մեկնաբանութիւնները իրական հետեւանքներ ունին, քանզի անցեալը կը շարունակէ ապրիլ մեր օրէնքներուն, հաստատութիւններուն, բանավէճերուն եւ ինքնութիւններուն մէջ: Ահա թէ ինչու կարելոր է ոչ միայն գիտնալ պատմութիւնը, այլեւ զայն քննադատաբար մեկնաբանել եւ ըմբռնել:

19-րդ դարու վերջաւորութեան պատմագրութեան մէջ գերակշռող մօտեցումը եղած է *փոզիթիւզմը*՝ գերադրականութիւնը: Այս հոսանքը հիմնուած էր այն համոզումին վրայ, որ պատմաբանին պարտքը պէտք է ըլլայ առարկայական արձանագրումը իրադարձութիւններուն՝ առանց անձնական մեկնաբանութեան, դատողութեան կամ բարոյական գնահատման: Գերադրականութիւնը կը շեշտէր, որ պատմութեան անհատական ընկալումները եւ մեկնաբանութիւնները կը վնասեն ճշգրտութեան: Անիկա



պատմական ճշմարտութիւնը կը հասկնար իբրեւ չփոխուող իրողութիւններու հաւաքածու մը՝ անկախ մարդկային զգացումներու կամ դիտանկիւններու ազդեցութենէն:

20-րդ դարու սկիզբներուն ի յայտ եկաւ նոր հոսանք մը՝ **ընկերային պատմագրութիւնը**: Ընկերային պատմաբանները կը կասկածէին առարկայականութեան հասանելի ըլլալուն եւ նոյնիսկ հարցականի տակ կ'առնէին անոր նպատակակէտ մը ըլլալը: Անոնք կը պնդէին, որ ամէն պատմաբան իր գործին մէջ պէտք է ներմուծէ իր ենթադրութիւնները, կեանքի փորձառութիւնները եւ կողմնակալութիւնները՝ գիտակցաբար թէ անգիտակցաբար: Պէտք է ըսել, որ այս մօտեցումը պատմութիւնը վերածեց աւելի կենսունակ եւ արդիական առարկայի մը: Անիկա ընթերցողին առիթ տուաւ անցեալի զարգացումները կապելու ներկայի իրողութիւններուն հետ՝ ընդգծելով շարունակականութիւնն ու կապակցութիւնը դարերու միջեւ:

1960-70-ական թուականներուն ի յայտ եկաւ նոր՝ աւելի արմատական մօտեցում մը՝ **յետարդիականութիւնը**: Այս դպրոցը արդէն վճռեց, որ առարկայականութիւնը պատրանք մըն է եւ առաջադրեց այն միտքը, որ միակ իսկապէս կարելոր բանը պատմաբանի ընկալումն է: Ըստ այս մօտեցման՝ պատմութիւնը ոչ թէ բացայայտուելիք ճշմարտութիւն մըն է, այլ կառուցուող պատկերացում մը: Ահա թէ ինչու յետարդիական պատմաբաններուն համար ընդունելի դարձաւ, օրինակի համար, անցեալի կերպարները դատապարտելը՝ այսօրուան բարոյական չափանիշերով: Անոնք նոյնիսկ կը պնդէին, որ պատմաբանները բարոյական պարտականութիւն մը ունին՝ քննութեան ենթարկել անցեալը բարոյական լոյսին տակ:

Վերոնշեալ երեւոյթին ի պատասխան, ի յայտ եկաւ **մշակութային պատմագրութիւնը**: Մշակութային պատմաբանը կ'ուսումնասիրէ անցեալ ընկերութիւններու արժէքները, արարողութիւնները, մտայնութիւններն ու զգացումները: Ան անցեալի աղբիւրներուն մէջ կը տեսնէ ոչ թէ սխալներ, որոնք պէտք է ուղղուին, այլ՝ բանալիներ, որոնք պատուհաններ կը բանան ժամանակի մը վրայ, ուր մարդիկ կ'ապրէին մեզի պէս՝ կը կասկածէին կամ կը հաւատային իրարու, կը մեծարէին կամ կը դատէին զիրար:

Այս բոլոր հոսանքները եւ մեկնաբանութիւնները կ'ընդգծեն, թէ պատմութիւնը մէկ ու վերջնական ձեւով գրուող եւ կարդացուող բան մը չէ: Տարբեր մտածողութիւններ, մօտեցումներ եւ վերլուծութիւններ միշտ ալ ի յայտ պիտի գան եւ պիտի շարունակեն ձեւաւորել մեր պատմական ընկալումները:

Ի վերջոյ, պատմութիւնը միայն պատասխաններու մասին չէ: Ան հարցումներու մասին է: Լաւ պատմաբանները չեն յաւակնիր տալ վերջնական վճիռներ: Անոնք կը մղեն մեզ որոնման՝ որպէսզի մենք ինքներս աւելի մօտեցողը ըլլանք ճշմարտութեան:

ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ԳՈՅԱՏԵՒՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Յակոբ Աւ.Սրկ. Պարսումեան



Հայ ժողովուրդի պատմութեան ընթացքը դարեր շարունակ կը վկայէ, որ իւրաքանչիւր փորձութեան դիմաց ստեղծուած են երկու հիմնական գիծեր՝ հայրենիք եւ գաղութներ: Երբ հայրենի հողը բռնագրաւուեցաւ եւ անոր կեդրոնական կեանքը ենթարկուեցաւ

ճնշումներու ու սասանումներու, գաղութները դարձան ապաստարաններ, ուր պիտի պահուէր ազգին գոյութիւնը, ինքնութեան եւ յիշողութեան պատուանդանը: Սակայն գաղութներու գոյատեւումը պատահականօրէն տեղի չունեցաւ: Անոնց պահպանման ու կազմակերպման համար անհրաժեշտ էր ունենալ խոր գիտակցութիւն, հաստատուն հիմքեր, կազմակերպական ճիգեր եւ նուիրեալ անձեր:

Գաղութի կամ հետագային համայնքի առաջին եւ գերագոյն երաշխիքը եկեղեցին եղաւ: Տաճարը աղօթքի վայր ըլլալէ անդին մարմնացաւ որպէս ազգային գոյութեան յանգանակ կեդրոն: Անիկա կապեց սերունդները իրենց նախնիներու հաւատքին, պահեց հոգեւոր շունչը եւ եղաւ ամուր պատնէշ ընդդէմ մոլորութեան: Առանց եկեղեցւոյ գաղութը պիտի դառնար ցիրուցան բազմութիւն:

Երկրորդ երաշխիքը դպրոցն է: Գիտականօրէն ապացուցուած է, որ լեզուի կորուստը ինքնութեան կորուստի առաջին քայլն է: Մայրենիով կրթութիւնը կը մնայ մեր մշակութային ժառանգութեան առանցքը: Սակայն ժամանակը կը պահանջէ նաեւ երկլեզու եւ բազմալեզու կրթական համակարգ, որ կը համատեղէ տեղական կեանքի լիարժէք մասնակցութիւնը եւ ազգային ոգին: Այս ձեւով գաղութը կը մնայ արդիական՝ առանց խզուելու իր արմատներէն: Ազգային եւ բարեսիրական կազմակերպութիւնները երրորդ ամուր երաշխիքն են: Անոնք կը ծառայեն որպէս պատուանդան՝ պահելու գաղութի զաւակները ցիրուցան ըլլալէ կամ ձուլումէ: Որքան զարգացած է կազմակերպական կեանքը, այնքան տոկուն կը մնայ համայնքը: Այսօր սակայն այս կազմակերպութիւնները պարտին յարմարիլ նոր պայմաններուն՝ օգտուելով տեղեկատուական արհեստագիտութենէն, հասարակական ցանցերէն եւ արդիական կառավարման ձեւերէն: Միայն այդպէս կը դառնան ժամանակի հետ քայլ պահող կառույցներ:

Զմոռնանք մամուլի անփոխարինելի դերը: Թերթն ու գիրքը եղան մեր յիշողութեան եւ զարգացման ազդակները: Առանց մամուլի ժողովուրդը պիտի դառնար մոռացութեան գերին ու պիտի կտրուէր համահայկական կեանքի հետ առնչուելու կարելիութենէն: Այսօր մամուլի տպագիր եւ թուային տարբերակները կը մնան մեր շարունակականութեան եւ իրազեկութեան ամենաուժեղ միջոցները: Հինն ու նորը, տպագիր էջն ու համացանցային հարթակը, պէտք է միատեղ գործեն՝ սերունդները կապելով անցեալին եւ ներկային:

Բոլոր կառույցները սակայն կը մնան դատարկ կեղեւ առանց առաջնորդներու: Անոնք են, որոնք կը մարմնաւորեն զոհաբերութեան ոգին, կ'երաշխաւորեն սերունդներու դաստիարակութիւնը եւ կը դառնան կենդանի կամուրջներ հայրենիքին ու սփիւռքի համայնքներուն միջեւ: Գիտական ուսումնասիրութիւնները կը հաստատեն, որ համայնքներու կենսունակութիւնը առնչուած է առաջնորդներու շարունակական վերարտադրութեան:

Այսօր նոր մարտահրաւերներ կը կանգնին մեր դիմաց՝ համաշխարհայնացում, գաղթի ալիքներ, արագ հաղորդակցութիւն: Գոյատեւման համար պէտք է զարգացնենք թուային մշակոյթ՝ երիտասարդութեան ներգրաւման համար, ստեղծենք համալսարանական եւ

գիտական ցանցեր՝ հայագիտական ուսումնասիրությունները խթանելու համար, իրախուսենք տնտեսական ու ներդրումային նախաձեռնություններ, որպեսզի համայնքները դառնան ոչ միայն մշակութային, այլև արտադրական կենտրոններ:

Այս բոլորը կ'առաջնորդեն դեպի մեծ տեսլական: Համայնքները պիտի շարունակեն գոյատևել միայն այն ատեն, երբ համադրեն ասանդը եւ նորարարությունը: Անոնք պետք է ըլլան ոչ միայն հայրենիքէն դուրս կազմակերպ հաւաքականություններ, այլև համայն հայութեան ռազմավարական յենարաններ: Հայրենիքն ու սփիւռքահայ համայնքները միասնական ամբողջություն կը կազմեն. մէկը առանց միւսին չի կրնար գոյատևել: Այսօր համայնքները հրաւիրուած են դառնալու ոչ միայն գոյութեան ապացոյցներ, այլև ապագայի կենդանի երաշխաւորներ:

<http://www.kantsasar.com/news/58113-2/>

ԵՐԲ ՀԱՅԵՐԸ ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐԻՂԻ ԹԱԳԱԻՈՐՆԵՐՆ ԷԻՆ



ԺԻՐԱՅՐ ՇՈՒՇԱՆԵԱՆ

20րդ դարու սեմին, չորս հայ գործարարներ աշխարհի քարիւղի մեծագոյն ընկերություններու սեփականատերներէն էին:

Հետեւեալ տողերուն մէջ պիտի ամփոփենք իրենց կեանքն ու գործունէութիւնը, շեշտը դնելով յատկապէս անոնց հայրենասիրական ու բարեսիրական ձեռնարկներուն վրայ:

Փարիզի հայկական Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին

ԱԼԵՔՍԱՆՏ ՄԱՆԹԱՇԵԱՆՅ (1842-1911)

Մանթաշեանց հովանաւորած է Կովկասի մեծագոյն հայկական որբանոցը: Անոր միջոցներով շէնքեր եւ հայկական եկեղեցիներ շինուած են Երեւանի, Պաքուի, Մոսկուայի, Փեթերսպուրկի եւ Փարիզի մէջ:

Մանթաշեանց նաեւ նիւթական աջակցութիւն տրամադրեց Թիֆլիսի Ներսիսեան հոգեւոր ճեմարանի նոր շէնքի կառուցման:



Անոր իղձը եղած էր՝ խոշոր նուիրաբերում մը կատարել Էջմիածինին: Անոր առաջարկով կը

կազմուի նոր վեհարանի մը նախագիծ՝ ընդարձակ սրահներով եւ ընդունարաններով:

Յաճախ Փարիզ ըլլալով, ան յղացած է հոն հայկական եկեղեցի մը կառուցելու միտքը: Ատոր համար 450,000 ֆրանքով տարածք մը գնած է Փարիզի կեդրոնը: Այնուհետեւ եկեղեցիի շինարարութեան համար տրամադրած է 1,540,000 ֆրանք:

Մանթաշեանցը նաեւ եղած է հայ մշակոյթի, գիտութեան, արուեստի եւ գրականութեան մեծ նուիրեալ եւ հովանաւոր: Ան հովանաւորած է Եւրոպայի լաւագոյն ուսումնական հաստատութիւններէն ներս սորված երկու հարիւրէ աւելի հայ պատանիներ եւ աղջիկներ, որոնցմէ շատերը յետագային դարձած են գիտութեան, մշակոյթի, արուեստի եւ գրականութեան յայտնի գործիչներ

ՍՏԵՓԱՆ ԼԻԱՆՈՍԵԱՆ (1872-1949)



Մանթաշեանցի ժամանակակից եւ քարիւղի հսկայ հանքերու սեփականատէր Ստեփան Լիանոսեան, Մանթաշեանցի բաղդատմամբ, սակաւաթիւ բարերարական գործերը կատարած է հայութեան համար:

Այսօր Մոսկուայի Ալտուֆեօ թաղամասը կայ Լիանոզովի անունը կրող բնակավայրը, որուն ամենաուշագրաւ կառոյցներէն է ուղղափառ եկեղեցին եւ Լիանոզով ընտանիքի շքեղաշուք առանձնատունը:

1920ին, ան Փարիզի մէջ հիմնած է Ռուսական առեւտրական եւ արդիւնաբերական միութիւնը (ՏորգՊրոմ), որ կը զբաղուէր ռուս գործարարներու շահերու պաշտպանութեամբ:

1919ին Լիանոսեան անձամբ ղեկավարած է համայնավար Ռուսիոյ դէմ ստեղծուած կառավարութեան ու Ճերմակ բանակին զէնքի մատակարարութեան ջանքերը:

Մահացած է 1949ին եւ թաղուած է Փարիզի Պասսի գերեզմանատան մէջ:

ՄԻՔԱՅԷԼ ԱՐԱՄԵԱՆՅ (1843-1922)



19րդ դարի երկրորդ կեսի եւ 20րդ դարի սկզբի հայ նախարդիւնաբերող, բարերար, Թիֆլիսի «Ազգային բարեգործական ընկերութեան» հիմնադիրն էր :

Եղած է Ներսիսեան դպրոցի մշտական հոգաբարձուն ու հովանաւորը:

Աջակցած է Թիֆլիսի նշանաւոր «Արամեանց» հիւանդանոցի կառուցման:

Համաշխարհային Ա. պատերազմի տարիներուն ապաստաններ կառուցած է հազարաւոր փախստական հայ գաղթականներու համար:

Արամեանցի պալատին մէջ գրուած է Հայաստանի Ա. Հանրապետութեան հռչակագիրը եւ հոն կը հանդիպէին Թումանեանը, Խրիմեան Հայրիկ կաթողիկոսը եւ ուրիշներ:

Խորհրդային կարգերու հաստատումէն ետք, Արամեանց կորսնցուցած է իր ամբողջ հարստութիւնը:

Զրկուելով հարստութենէն ու դիրքէն, ան 1922ին մահացաւ աղքատութեան մէջ:


Արամեանց թաղուած է Խոջիվանքի հայկական գերեզմանատան մէջ:

ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ (1869-1955)



Երուսաղէմի
մատենադարանը Լոնտոնի

«Կիւլպէնկեան»
Սուրբ



Մարգիս եկեղեցին

Փորթուկալահայ գործարարը եւ բարեգործը մեծ դեր ունեցած է Միջին Արեւելքի քարիւղի պաշարները Արեւմուտքին հասանելի դարձնելու աշխատանքին մէջ:

Կիւլպենկեան քարիւղի իր առաջին քայլերը կ'առնէ հանրայայտ Մանթաշեանցի Կ. Պոլսոյ մէջ գտնուող գրասենեակին մէջ:

Կիւլպենկեան Պարսկաստանի մէջ կը գնէ նաւթաբեր հողատարածքներ ու կը դառնայ British Petroleum-ի հիմնադիրներէն մէկը:





20րդ դարու սեմին, Գալուստ Կիւլպէնկեան աշխարհի տարբեր շրջաններու մէջ քարիւղի արտադրութեան ընկերութիւններ ունէր: Ան քարիւղի հանքեր ունէր Վենեզուելայի, Իրանի, Իրաքի, Սեւտական Արաբիոյ եւ Միացեալ Արաբական Էմիրութիւններու մէջ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան հիմնադիր Պօղոս Նուպար փաշայի մահէն ետք, կազմակերպութեան ղեկավարութիւնը կը ստանձնէ Գալուստ Կիւլպէնկեան՝ 1930ին:

1920-1922ին, անոր նիւթական աջակցութեամբ, Լոնտոնի մէջ կը կառուցուի Սուրբ Սարգիս եկեղեցին՝ Հաղբատի վանքի օրինակով:

1929ին կառուցած է Երուսաղէմի Հայոց պատրիարքարանի կից գտնուող «Կիւլպէնկեան» մատենադարանի շէնքը: Ան նաեւ մեծ ուշադրութիւն դարձուցած է Կ. Պոլսոյ Սուրբ Փրկիչ ազգային հիւանդանոցին, նպաստելով անոր:

1920էն մինչեւ 1940, Ան իր հովանիին տակ առած է Թուրքիոյ, Սուրիոյ, Լիբանանի, Յորդանանի եւ Իրաքի շարք մը հայկական դպրոցներն ու բժշկական կեդրոններ, ձեռնարկած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի թանգարանին վերակառուցման եւ պարիսպներու վերականգնման գործերուն:

Կիւլպէնկեանի անունը կրող եւ Լիզպոն հաստատուած հիմնարկութիւնը կը շարունակէ իր հայանպաստ գործունէութիւնը:

Մանթաշեանց, Լիանոսեան, Արամեանց եւ Կիւլպէնկեան կը տիրապետէին աշխարհի քարիւղի մեծամասնութեան եւ կը նկատուէին 20րդ դարու քարիւղի թագաւորները:

Մանթաշեանցի, Լիանոսեանի եւ Արամեանցի հարստութիւնը սեփականացունցաւ համայնավարներուն կողմէ ու կորսնցուցին իրենց քարիւղի գահերը:


Անոնք ժամանակակից էին Հայոց Ցեղասպանութեան, Հայաստանի Ա. Հանրապետութեան եւ Պոլշեիկեան յեղափոխութեան:

Ո՞վ գիտէ, եթէ անոնք մնային աշխարհի քարիւղի թագաւորները, հայոց պատմութեան ընթացքը տարբեր պիտի ըլլա՞ր, սակայն մէկ բան յստակ է, որ անոնց կեանքը հայու հանճարի ու հայրենասիրութեան տիպար մըն է որմէ մեր ապագայ սերունդները շատ բան ունին սորվելիք:

Աղբիւր՝ ԱՍՊԱՐԷՁ

ԿՐԿՆԱԿԻ ՍՐԲԱԴԱՍՈՒՄ ՍԸ

Կոմիտաս վարդապետի երկակի սրբադասման
աստուածաբանական տրամաբանութեան մասին



Գուցէ խորագիրը տարօրինակ հնչէ՝ Կոմիտաս վարդապետ կրկնակի սո՛ւրբ: Բայց ինչո՞ւ չէ. մեր ժողովուրդը իր մեծանուն երգահան, երգիչ, երաժշտական էթնոլոգ, երաժշտագետ, վարդապետ եւ ուսուցիչ, բանահաւաք, խմբավար, մանկավարժ, հայկական ազգային երաժշտութեան տոհմիկ դպրոցի հիմնադիր Կոմիտաս վարդապետը՝ «հայոց երգի վեհափառը», միաժամանակ Հայոց ցեղասպանութեան տարաբախտ նահատակը այնքան կը սիրէ ու անոր գրական-մշակութային ժառանգութիւնը այնչափ բարձր կը գնահատէ, որ զինք գերազանց գոհունակութեամբ ոչ միայն որպէս կրկնակի, այլեւ եռամեծ սուրբ մը ըլլալու իրողութեամբ պիտի ընդունի: Արժա՛ն եւ իրա՛ւ:


Այնուամենայնիւ գոյութիւն ունի աստուածաբանական տրամաբանութիւն մը, եւ աւելին՝ եկեղեցական օրինակարգ մը, որուն պիտի ուզէի անդրադառնալ

ստորեւ:

Մայր աթոռ Ս. Էջմիածնէն ստացուած հաղորդագրութիւնը կը տեղեկացնէ, որ 4–7 նոյեմբերին գումարուած Գերագոյն հոգեւոր խորհուրդի (ԳՀԽ) ժողովը, ի թիւս այլ նիւթերու, քննարկած եւ որոշած է «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայրապետի վախճանման 1700-ամեակին նուիրուած հոգեւոր, մշակութային միջոցառումների կազմակերպման եւ Կոմիտաս վարդապետի սրբադասման հարցի քննութեան նպատակով ձեւաւորել յանձնախմբեր»:

Վերոգրեալ տեղեկութեան մէջ ուշադրութեան արժանի են ոչ միայն Ս. Գրիգոր Լուսաւորիչի վախճանման 1700-ամեակը նշելու ուղղութեամբ նախատեսուող միջոցառումները, այլեւ Կոմիտաս վարդապետի սրբադասման համար ձեւաւորուող յանձնախումբը:

Այս առթիւ պիտի ուզէի առ ի տեղեկութիւն ընթերցասէր հասարակութեան յայտնել, որ տակաւին 1994 թուականին, հովանաւորութեամբ



Գանատահայոց առաջնորդարանի Քրիստոնէական ուսման եւ քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնին, Մոնթրէալի մէջ հրատարակած էի ստուար ուսումնասիրութիւն մը «Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչէն»¹ խորագրով: Սոյնը ունէր նաեւ հետեւեալ ենթախորագիրը՝ «Նպաստ մը Կոմիտաս վարդապետի սրբադասման հարցին»:

Ակնյայտ է, որ հատորը մասնաւորաբար ուղերձ մըն էր Կոմիտաս վարդապետի սրբադասման հարցին, որուն առիթ կ'ընծայէր անոր ծննդեան 125-ամեակը: Հատորիս հեղինակը յառաջաբանին մէջ կը նշէ.

«Այսօր, երբ մեր հայրենիքը հոգեւոր-մշակութային աննախընթաց զարթօնք մը կ'ապրի ու մեր Եկեղեցին լրջօրէն կը մտածէ Կոմիտաս վարդապետը

սրբադասելու մասին, թող սոյն ձեռնարկը ըլլայ համեստ նպաստ մը այս ուղղութեամբ տարուած աշխատանքներուն, անոր լուսապսակ կերպարը աւելի լաւ ըմբռնելու եւ իր մենագրութիւններուն

ընդմէջէն տեսնելու վշտակոծ Վարդապետիս երկնաշնորհ մեծութիւնը»:

Առաջարկը սեթեւեթ ցանկութիւն մը չէր, այլ ունէր հոգեւոր-մշակութային, ինչո՞ւ չէ նաեւ համազգային համոզումի մը խորապատկերը՝ նկատի ունենալով այն փաստը, որ մեր ժողովուրդի հաւաքական գիտակցութեան մէջ Կոմիտաս վարդապետ արդէն իսկ սուրբ մըն էր, այլապէս կը մնար Հայ եկեղեցիին կողմէ անոր պաշտօնական սրբադասման իրականացումը:

Արդարեւ, ընդամենը տարի մը ետք, երբ 3-5 ապրիլ 1995 թուականին Մայր աթոռ Ս. Էջմիածնի մէջ գումարուեցաւ Ազգային-եկեղեցական ժողովը, հոն բերուած քանի մը տասնեակ առաջարկներուն մէջ տիար Արթօ Պասմաճեան Գանատահայոց պատգամաւորներուն եւ թեմին անունով հանգամանօրէն ներկայացուց Կոմիտաս վարդապետի սրբադասման հարցը:

¹ Օղլուգեան, Աբել, իմա՝ Մանուկեան, Աբել, «Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչէն: Նպաստ մը Կոմիտաս վարդապետի սրբադասման հարցին», Մոնթրէալ, տպ. Ա. Տ. Մանավեան, 1994, 236 էջ:



Առ այս անհրաժեշտ համարեցի 2013 թուականին հրատարակելու ուրիշ հատոր մը «Հայ եկեղեցին եւ Մեծ Եղեռնի զոհերու սրբադասման հարցը»² խորագրով, որ միաժամանակ ունէր՝ «Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ» ենթախորագիրը:

Սոյն հատորի վերջաւորութեան առաջարկած էի յիշատակութեան բանձել մը՝ ըսելով.

«...Որքան հանգիստ եւ լուսաւոր պիտի ըլլային Ապրիլեան մեր նահատակներուն հոգիները, եթէ օր մը, թերեւս մօտ ապագային, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին առթիւ, Հայ եկեղեցւոյ խորաններէն եւ ազգիս սրբազան բեմերէն տարուէ տարի 24 Ապրիլին հնչէր նուիրական՝ *Սրբոցն Կոմիտասայ վարդապետին եւ աւելի քան մէկուկէս միլիոն նահատակացն ազգիս հայոց...* յիշատակութիւնը»:

Սակայն, դժբախտաբար, մեր ազգային-եկեղեցական կեանքին մէջ զանազան իրադարձութիւններու բերումով Կոմիտաս վարդապետը սրբադասելու այս կարեւորագոյն հայցազիրը բարձի-թողի եղաւ: Ուրեմն ամբողջ երեք տասնամեակ էր պետք, որպէսզի հարցը, – ափսոս, վերահասու չեմ անոր իսկական դրդապատճառին կամ ԳՀԽ-ի ժողովին մէջ նիւթը բարձրաձայնողին մասին, – կրկին վերատեսութեան ենթարկուէր եւ որոշում տրուէր «ձեւաւորելու յանձնախմբեր» Կոմիտաս վարդապետը սրբադասելու նպատակով:

Նախաձեռնութիւնը, անտարակոյս, ողջունելի է: Սակայն հարց պէտք է տալ. չէ՞ որ 23 ապրիլ 2015 թուականին, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած ձեռնարկներու շարքին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան նահատակներու սրբադասման արարողութիւնը:

Հայոց ցեղասպանութեան 1,5 միլիոն նահատակներու սրբադասման հռչակագրին մէջ ըսուած է.

«Ամենասուրբ երրորդութեան շնորհաբաշխ զօրութեամբ, Տէր Յիսուս Քրիստոսից տրուած եւ Հայաստանի լուսաւորիչներ Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալներից փոխանցուած իշխանութեամբ, Սուրբ Աստուածամօր, Հայոց երկրորդ լուսաւորիչ Սուրբ Գրիգորի եւ ամենայն սրբերի բարեխօսութեամբ, եպիսկոպոսաց ժողովի որոշմամբ եւ մեր ժողովրդի քրիստոնէական կեանքի վկայութեամբ սրբադասում ենք Հայոց ցեղասպանութեան նահատակներին»:

Հայոց ցեղասպանութեան 1,5 միլիոն զոհերու սրբադասումը արդարացի եւ գերազանց ձեռնարկում մըն էր, որ ունէր ոչ միայն եկեղեցական, այլեւ համազգային կարեւորագոյն նշանակութիւն: Ան կը ներառէ հայազգի բոլոր զոհերը՝ իրենց ազգային եւ կրօնական պատկանելիութեան պատճառով մեզի յայտնի եւ անյայտ բովանդակ նահատակները՝ գիտութեան, մշակոյթի, հանրային կեանքի եւ եկեղեցական ասպարեզի անխտիր բոլոր գործիչները, որոնց շարքին կը դասուի նաեւ Կոմիտաս վարդապետ:

² Մանուկեան, Արէլ, «Հայ եկեղեցին եւ Մեծ Եղեռնի զոհերու սրբադասման հարցը: Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ», տպ. Արագ, Պէյրութ – Ժընև, 2013, 88 էջ: Նոյնը հրատարակուեցաւ նաեւ անգլերէն թարգմանութեամբ: Տէ՛ս Manoukian, Abel, New Saints, Canonizing the victims of the Armenian Genocide in the Armenian Church, Araz Printing Press, Beirut – Geneva, 2015, 80 pages.



Նշուած համաթեքսթը միանշանակ կը յառաջացնէ հետեւեալ յարակարծութիւնը, որ ԳՀԽ-ը ձեւաւորելով յանձնախումբ մը՝ կը միտի կրկին սրբադասել արդէն 2015 թուականին Հայոց ցեղասպանութեան բոլոր նահատակներուն հետ սրբադասուած Կոմիտաս վարդապետը:

Այլապէս, ԳՀԽ-ը նկատի ունենալով այն փաստը, որ Կոմիտաս վարդապետ իր մահկանացուն կնքեց 1935 թուականին Փարիզի մէջ, զայն չի ներառեր Հայոց ցեղասպանութեան նահատակներու մեծագումար հոյլին մէջ: Այսինքն՝ ան ցարդ սրբադասուած չէ: Ինծի կը թուի, թէ սոյնը ոչ-պակաս անսովոր յարակարծութիւն մըն է, քանի որ Կոմիտաս վարդապետ մեր ժողովուրդի հաւաքական գիտակցութեան մէջ 1915 թուականին Չանդըրը աքսորուած եւ հոգեպէս եղեռնագործուած՝ Հայոց ցեղասպանութեան նահատակ մըն է: Ինչ փոյթ, թէ ան ֆիզիքապէս իր մահկանացուն կնքած է Փարիզի Վիլ-ժուիֆ արուարձանի հոգեբուժարանին մէջ 20 հոկտեմբեր 1935 թուականին, երբ անոր ստեղծագործական եռանդը խորտակուած, իսկ քնարը ընդմիշտ լռած էր մահախուճապ աքսորէ վերադարձին:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան արհաւիրքը վերապրած հոգեւորականներուն, զիր ու բանի երախտաշատ մշակ Թէոթիկ իր «Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին: Աղետալի 1915 տարին» կոթողային աշխատութեան մէջ Կոմիտաս վարդապետի մասին կը վկայէ.

«Ամերիկեան դեսպան Մորկնթաուի բարեխօսութեամբ հազիւ կարելի եղաւ զինքը վերադարձնել Չանդըրի իր աքսորավայրէն: Բարեկամաց եւ աշակերտներու տեսութենէն գրեթէ զուրկ, Կոմիտաս վրդ. պատերազմի ընթացքին ապրեցաւ Բերայի իր մենարանը, պարապելով իր մասնագիտութեամբ, առանց կարենալու սակայն միտքէն վանել կրկին աքսորուելու մղձաւանջը, որ հուսկ ուրեմն ընկճեց զինք: Խելագար եւ թշուառ վիճակի մէջ մնաց Շիշլիի Լա-Փէ հիւանդանոցը, մինչեւ որ համակիրներ Զինադադարէն յետոյ փոխադրեցին զինք Փարիզ: Խնամածու բժիշկներ ափսոսաբար թերահաւատ են դէռ իր ապաքինման մասին: Այսպէ՛ս ահա տապալեցաւ հայ երաժշտութեան վերակենդանացուցիչ՝ այս հոյակապ վարպետը թուրք բռնակալութեան սեւ թաթերուն տակ»³:

Բոլոր պարագաներուն բացատրութեան կը կարօտի, թէ ինչո՞ւ համար հաւաքական սրբադասում մը ետք անհրաժեշտ կը նկատուի իրականացնել յաւելեալ անհատական սրբադասում մը: Եթէ այս տրամաբանութեամբ առաջնորդուինք, ապա նոյնքան կարելորդ պիտի դառնայ անհատաբար սրբադասել այն միւս բոլոր հաւատքի ու արեան նահատակ եկեղեցականները, որոնք յականէ-յանուանէ վաւերագրուած են Թէոթիկի «Գողգոթա հայ հոգեւորականութեան» վերոնշեալ աշխատութեան մէջ:

Ոչ-պակաս արժանահաւատ հիմնաւորում է պէտք, թէ ԳՀԽ-ը ի՞նչ դրդապատճառներով կամ ինչո՞ւ համար վերջերս կայացած իր ժողովին մէջ որոշած է ձեւաւորելու յանձնախումբ մը՝ Կոմիտաս վարդապետը անհատապէս սրբադասելու նպատակով: Բացառուած չէ այսօրուան պետութիւն եւ եկեղեցի յայաբերութեանց լարուած իրավիճակը, որու

³ Հմմտ. Թէոթիկ, «Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին: Աղետալի 1915 տարին», St. Vartan Press, Նիւ Եորք, 1985, էջ 12:



խորապատկերին վրայ նաեւ պէտք է մեկնաբանուի Մայր աթոռին կողմէ նախաձեռնուած այս մարտավարութիւնը:

Բաց աստի, Կոմիտաս վարդապետի սրբադասման հարցը քննելու համար նշուած յանձնաժողովի ձեւաւորումը ցոյց չի տար ԳՀԽ-ի կողմէ արհեստածին եռանդի մը դրսեւորումը: Այնուամենայնիւ, հոս հարց կը յառաջանայ, թէ արդեօք այս խթանը կապուած է Վատիկանի կողմէ Իգնատիոս արք. Մալոյեանի սրբադասման հետ, եւ արդեօք ան չի կրեր եկեղեցական ներքին հակազդեցութեան կամ մրցակցութեան մը բնոյթը:

Ինչպէս վերոգրեալ նշուեցաւ, արդէն 23 ապրիլ 2015 թուականին Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին առթիւ Հայց. առաք. եկեղեցին հաւաքաբար սրբադասեց Հայոց ցեղասպանութեան բոլոր զոհերը: Այս հանդիսաւոր արարողութիւնը եւ անոր հետ առնչուած սրբադասման հռչակագիրը լայնօրէն կ'ընկալուէին, որ այսպիսով սրբադասուած են ոչ միայն Հայց. առաք. եկեղեցւոյ նահատակ անդամները, այլեւ այլ յարանուանակից հայեր, մասնաւորապէս՝ հայ կաթողիկէ, աւետարանական, եւ ինչո՞ւ չէ՝ այլ քրիստոնէայ համայնքներու ներկայացուցիչներ՝ առանց դաւանական խտրականութեան: Ի վերջոյ, մահու աքսորներուն եւ արիւնահեղձ կոտորածներուն ոչ ոքի խնայուեցաւ իր ունեցած դաւանական տարբերութեան համար՝ ո՛չ հայ առաքելականը, ո՛չ կաթողիկէն եւ ո՛չ ալ բողոքականը:

Այս խորապատկերին վրայ հարց կը յառաջանայ յատուկ նահատակներու լրացուցիչ, անհատական սրբադասման աստուածաբանական անհրաժեշտութեան եւ հովուական իմաստին շուրջ: Ուրեմն ինչո՞ւ համար է նոր, առանձնայատուկ սրբադասումներու այս ակնյայտ «կրկնապատկումը»:

Իգնատիոս արք. Մալոյեանի պարագային հարկ է նկատի ունենալ, որ անոր սրբադասման վերաբերեալ պաշտօնական դիմումն ու համապատասխան գործընթացը Վատիկանի մէջ ձեռնարկուած էր Հայ կաթողիկէ եկեղեցիին կողմէ՝ աւելի վաղ շրջանին: Իգնատիոս արք. Մալոյեան երանելի հռչակուեցաւ Յովհաննէս Պօղոս Բ. պապին կողմէ 7 հոկտեմբեր 2001 թուականին, իսկ անոր սրբադասումը տեղի ունեցաւ վերջերս՝ 19 հոկտեմբեր 2025 թուականին, Լեւոն ԺԴ. պապին կողմէ, որպէս տրամաբանական շարունակութիւնը Հռոմէական կաթողիկէ եկեղեցւոյ մէջ աւանդաբար օրինակարգուած գործընթացին:

Միեւնոյն է, որոշակի հարցեր բաց կը մնան ու արդարեւ կը կարօտին լուրջ վերլուծումներու. արդեօք Հայոց ցեղասպանութեան զոհ դարձած հայ կաթողիկէ եւ բողոքական մեր քոյրերն ու եղբայրները ներառուած են Հայց. առաք. եկեղեցիին կողմէ իրականացուած 2015 թուականի սրբադասման մէջ, թէ՞ անոնք դիտաւորեալ բացառուած են իրենց դաւանական տարբերութեան պատճառով: Կրնա՞յ ըլլալ, որ թէկուզ նահատակութեան եւ կեանքի զոհաբերութեան գնով ձեռք բերուած հաւատքի վկայութեան պարագաներուն յարանուանութիւնը առաջնահերթ նկատուի միեւնոյն քրիստոնէական կրօնէն եւ ազգային պատկանելիութենէն: Այսպիսի կարեւոր նշանակութիւն ունեցող հարցեր արժանի են աւելի լուրջ եւ խորացուած աստուածաբանական մեկնաբանութեան, եւ ամենեւին ճիշդ պիտի

չըլլայ, որ անոնք ներագգային եւ միջեկեղեցական զգայնութիւններէ մեկնելով թաքցուն մութ գորոցներու մէջ:

Անդրադառնալով Կոմիտաս վարդապետը սրբադասելու հարցով ԳՀԽ-ի յանձնախումբ մը ձեւաորելու վերաբերեալ որոշումին, պէտք է համոզուած ըսել, որ ան արդէն իսկ հայ ժողովուրդի հաւաքական գիտակցութեան եւ անոր ջերմեռանդ ապրումներուն մէջ գերազանցօրէն սո՛ւրբ է իր օրինակելի վարքով, իր անմահ գործով եւ քրիստոնէական հաւատքի երանաշնորհ վկայութեամբ:

Դոկտ. Արէլ քինյ. Մանուկեան

Ժընեւ, 8 նոյեմբեր 2025

*Տօն յիշատակի սրբոց հրեշտակապետացն՝ Գաբրիէլի, Միքայէլի
եւ ամենայն երկնային զօրացն*

ՏԵՍԱԿԷՏ

ՍՓԻՒՌՔԻ «ԱՆԵԼԻՔ» ԵՒ ...ԿԱՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

«Ազգի մը դատողութիւնը կազմուած կ'ըլլայ այն պահէն սկսեալ երբ ան կրնայ ինքզինք դատել: Բայց այս առանձնաշնորհոհումը ձեռք կը բերուի շատ ուշ»: ԿԷՕԹԷ, գերմանացի գրող



Ո՞վ ինչպէ՞ս կրնայ իրատեսական գնահատումը ընել հայկական ՍՓԻՒՌՔԻ ընկերային, քաղաքական, մշակութային եւ տնտեսական կարողականութեան: Այդ փորձը երբեւիցէ եղա՞ծ է: Գնահատել կը նշանակէ դատել եւ ընտրել, ճանչնալ, գործելու համար:

ՍՓԻՒՌՔԻ գլխուն տակ գտնուող մարդոց թիւը ո՞վ կրնայ ճիշդ գնահատել: Մտածել նաեւ այն մասին, որ Սփիւռքը ի՞նչ է ընդհանուր ըմբռնումով Հայ Ազգին եւ

անոր Հայրենիքին համար: Այդ ՀԱՅՐԵՆԻՔԻն ալ սահմանումի կարիք ունի որպէս աշխարհագրութիւն, տարածք, նախահայրերու ժառանգութիւն, կեանքի արգանդ: Ճշդումներէ ետք կրնանք հարցնել, թէ Սփիւռքը «անելիք» ունի՞ Ազգին եւ Հայրենիքին համար, եթէ կը հաւատանք, որ ինք ազգի անկորուստ շարունակութիւն եւ մաս է: Ի՞նչ է Սփիւռքի «կարողականութիւն»ը, «պոտենցեալ»ը (potentiel) անմիջական ներկայի մէջ, ի՞նչպէս կը սահմանուի «անելիք»-ը: Այդ առաջադրանքը հետապնդելու եւ իրականացնելու աշխատանքին մէջ դերակատար ըլլալու համար պէտք է գիտնալ Սփիւռքի կարողականութիւնը: Ընդհարապէս հայոց Իրաւունքի վերականգնման միտող «անելիք»-ի մասին բանաձեւ չկայ, այդ մասին չի գրուիր եւ չի խօսուիր: Կան հոգեշահ, բարձրագոյն եւ հակասական խօսքեր, որոնք քաղաքականութիւն կը համարուին եւ կը ճապաղին բարեսիրութեան եւ զբօսաշրջութեան իրարանցումին մէջ: Անոնցմէ անդին նայելով եւ ընկերաքաղաքական Ճշդումներ ընելէ ետք, կրնանք մտածել Սփիւռքի «անելիք»ի մասին, հարց տալով, թէ ան իրապէս «ի՞նչ կ'ուզէ ընել, կուզէ՞ բան մը ընել եւ ինչպէ՞ս»:

Յստակացման կը կարօտի ՀԱՅ ԱԶԳԻ հասցեն: Ո՞ւր կը գտնուի այդ ԱԶԳը, ան միայն



ներկայի Հանրապետութեան մէջ է, ընդհանրապէս Կովկասի, կը ներառնէ՝ ռուսական կայսրութեան, օսմանեան կայսրութեան, ներկայի Թուրքիոյ հայերը, եւ համաշխարհային տարածումով՝ բոլոր երկիրներու հայերը եւ հայաճնուողները: Հարց Ի՞նչ թիւ կը ներկայացնէ Հայութիւնը ընդհանրապէս, եւ առանձնապէս՝ Սփիւռքահայութիւնը: Պատասխանը ենթադրութիւն պէտք չէ չըլլայ: Բայց կրնա՞յ այդպէս չըլլալ: Կ'ըսենք Գաղութ, Համայնք, այս կամ այն երկրի անունով, իւրաքանչիւրը ներքնապէս նաեւ յոգնակի է, քանի որ կան առանձին անուններով ներքին համայնքներ: Թիւեր չունինք, չեն ճշդուած:

Կա՞յ, եղա՞ծ է սահմանուա՞ծ է «Անելիք»-ի իրաւ առաջադրանք, որ թաղային գուարճութիւններով, երգով, պարով, զբօսաշրջութեամբ, բարեսիրութեամբ եւ անվերջանալի քննադատութիւններով չճանճաղի:

Սփիւռքը բազմանուն միգամած մըն է, անոր կարողականութիւնը ենթադրութիւն է, չէ ճշդուած առարկայական տուեալներու հիման վրայ, նոյնիսկ՝ մօտաւոր ձեւով: Զբօս են ամբոխավարական, եւ քաղքենիական, եւ ջոջական դատարկաբանութիւնները եւ մրցակցութիւնները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆ եւ ՀԱՅ ԱԶԳ, հարցերով, ՍՓԻՒՌՔը, «ԱՆԵԼԻՔ» ունի՞, ի՞նչ է այդ «ԱՆԵԼԻՔ»-ը: Ան Ազգի քաղաքականութիւն կրնա՞յ ըլլալ, ի՞նչ են անոր հնարաւորութիւնները քաղաքական դերակատար ըլլալու համար:

Միամիտ չըլլանք, մեր ճկոյթի ետին չթաքնուինք, մեր փափաքները իրականութիւն չհամարենք: Սփիւռքը աշխարհագրական, մշակութային, լեզուական, քաղաքակրթական, քաղաքական, գաղափարախօսական մէկութիւն չունի: Հոն ուր հայեր կան, գաղութ, համայնք, բախտաւոր պարագային, կը պահուի, երանգներով, պատկանելիութեան անորոշացող զգացում մը, լեզուով, եկեղեցիով, անցելապաշտութեամբ, հայասիրութեամբ, հայաստանասիրութեամբ:

Կ'ըսենք գիտակցութիւն, թէեւ աւելի տպաւորիչ է ըսել «հայապահպանում», որ համարկումներով եւ պատշաճեցումներով, ստեղծուած-ստեղծուող եւ փոփոխուող հաւաքականութիւնները կը գունաւորէ «հայ» վերադիրով:

Մեծ է թիւը մարդոց, որոնք իրենք իրենց շնորհած են Յանուն Սփիւռքի խօսելու իրաւունք, այդ համարելով քաղաքականութիւն: Ուրկէ՞ եւ ինչպէ՞ս ստացուած է այդ իրաւունքը, ո՞ր ծրագրին համար, որոնց որոշումով: Համայնքը մասնակի է Սփիւռք ըմբռնումին համեմատաբար: Համայնքը հայրենիքէն դուրս գտնուող առաւել կամ նուազ մեծ թիւով մարդոց «հայրենասիրական» խմբաւորում է, ան ազգ չի գոյացներ, մէկութեան հասարակաց տեսիլք եւ ստորեգելիներ չունի, բախտաւոր պարագային զանոնք ունենալ կարծող փոքրամասնութիւն մը, խումբ մը, կը պահէ «բազմապատկեր յիշողութիւններ», մի՞ շտ ենթակայական, խօսքով, երգով, ճառով, որոնք բաւարար կը համարուին ինքնահաստատման համար: Ընկերաքաղաքական բեմի վրայ, Սփիւռքը տեսանելիութիւն, ներկայութիւն եւ ներկայացուցչութիւն չունի, անոր թիւը ենթադրութիւն է, երկու, հինգ, տասը, քսան կամ աւելի միլիոններ: Թիւի ճշդումը կրնա՞նք կատարել, ինչպէ՞ս եւ ազգային որակական ո՞ր հիմնաւորումներով: Առանց ճշդումի, կը մնան անհատական եւ խմբային ցանկութիւններ, երազ, փառասիրութիւն, բարձրագոյ ճառ:

Ի՞նչ կ'ուզէ Սփիւռքը: Ան իրապէս բան մը կ'ուզէ՞:

ՍՓԻՒՌՔի հայերու թիւի մասին խօսելէ առաջ, պէտք է ճշդել անոր աշխարհագրական սահմանները, ճշդում՝ որ միտքի մարզանք չըլլայ: Գործնական պիտի ըլլայ մեկնիլ տարբեր երկիրներու համայնքները մէկ առ մէկ նկատի ունենալով փորձել իւրաքանչիւրին մէջ գտնուող հայերու թիւը ճշդել, քանի որ անկարելի է մարդահամար ընել: Առաջին հերթին կրօնական հաստատութիւնները օգտակար կրնան ըլլալ, ապա՝ միութիւնները, կուսակցութիւնները, գիտնալով, որ ստացուած թիւերը միշտ իրականութենէն հեռու պիտի



ըլլան, նոյնիսկ հոն, ուր, կ'ըսենք որ հայերու թիւը մեծ է, կամ անոնք որոշ չափով խմբուած են: Այս աշխատանքը պէտք է կատարել մասնակի վիճակագրութիւններ կազմակերպելով, զանոնք խմբելով, գումարելով, եւ ապա գնահատումներ ընել: Այս ընել մասամբ դիւրին է, երբ հայերու բնակած երկիրները իրենց կառոյցով համայնքային են, իսկ հոն ուր ազգային, կրօնական եւ ցեղային տարբերութիւնները օրինական ճանաչում եւ արձանագրութիւն չունին, բնակիչը քաղաքացի է իրաւունքներով եւ պարտաւորութիւններով, յաճախ նաեւ լեզուով: Տրուած թիւերը երբեք ճիշդ պիտի չըլլան:

«Համայնքային իրաւունք»-ներ եւ «Ազգի Իրաւունքներ» չեն շփոթուիր, նման շփոթ ազգային եւ քաղաքական ըմբռնումի այլասերում կ'ըլլայ: Յստակացումներէ ետք միայն կրնանք մտածել Սփիւռքի Անելիքի սահմանման, անոր կառուցողական դերի եւ յանձնառութեան մասին, որ, կ'ենթադրէ գաղափարախօսութիւն, կազմակերպութիւն եւ միջոցներ: Սփիւռքը հայրենահանուածներու եւ անոնց յետնորդներու անորոշ շրջագիծով զանգուած է, զոր պէտք է կազմակերպել, ան պէտք է կազմակերպուած ըլլար, որպէս անիրաւուած, հայրենագրկուած եւ աքսորական ժողովուրդ, պայքարելու համար բռնագրաւուած հայրենիքի ազատագրութեան եւ հոն վերադարձի իրաւունքի օրակարգով: Այդ է հայրենահանուածի եւ յետնորդներու հայրենիք ունենալու եւ հոն վերադառնալու ԻՐԱՒՈՒՆՔԻ ՊԱՅՔԱՐԸ: Հայրենիք լքողներու նոր գաղթականութիւնը հայրենահանուածներու Սփիւռքին վրայ գումարումը կ'այլափոխէ անոնց Անելիքի ըմբռնումը:

Հայրենիքը պատմական իրողութիւն է, ժողովուրդի մը դարերու կեանքով հաստատուած իրական իրաւունք:

Ինչո՞ւ ժողովուրդը միացնելու համար զայն չենք խմբեր Սերի դաշնագրով բանաձեւուած միջազգային ճանաչման շուրջ, որուն արտայայտութիւնն է Միացեալ Նահանգներու նախագահ Ուիլսոնի վճիռով գծուած սահմաններով ՀԱՅԱՍՏԱՆը: Այդ սահմանները չէին գծուած կամայականութեամբ, արդիւնք էին Խաղաղութեան միջազգային Ժողովի որոշուման, որուն գործադրութիւնը պահանջել Հայրենահանուածներու եւ անոնց յետնորդներու իրաւունքն է, որմէ հրաժարիլ ՎԱՏՈՒԹԻՒՆ է, հայուն, այդ վճիռը կայացուցած ժողովուրդներուն եւ պետութիւններուն համար:

Ի հարկէ եթէ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆը չէ դադրած մարդկութիւնը միացնող եւ իմաստաւորող ըմբռնում ըլլալէ, առանց որուն պէտք է ընդունիլ որ ՄԱՐԴԸ ԴԵՌ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՊՐԻԼ ԱՆՏԱՌԻ ՕՐԷՆՔՈՎ, ԶՈՒՆԳԼԻԻ ՕՐԷՆՔՈՎ:

Եթէ հայը չգիտակցի իր ԻՐԱՒՈՒՆՔԻՆ եւ անոր տէր չկանգնի, այդ հետապնդման ծառայացնելով իր մարդկային, իմացական, համբանքի եւ նիւթական կարողականութիւնը, ուրիշներ այդ չեն ըրած եւ պիտի չընեն իր փոխարէն եւ մենք, մեր յետնորդները, բանաստեղծին պէս պիտի ըսեն, որ «մոռացումը առաւ ինձմէ ամէն բան»... եւ յիշատակներն ալ պիտի անհետին:

Այն ատեն հայրենահանուածներու յետնորդները պիտի ըլլան Սպառողական քաղաքակրթութեան անանուն եւ անինքնութիւն հիւլէնէ ր:

Կրնանք սկսիլ, պէտք է սկսիլ մենք մեզ ճանչնալով, որպէս ՄԱՐԴ, որ ունեցած է անցեալ եւ ինքնութիւն, եւ միանալ, ուժերը մէկտեղել: Այն ատեն կը նուաճենք արեւուն տակ մեր ինքնութեամբ ապրելու իրաւունքը:

Պատմութեան էջերը միշտ բաց են: Գիտակից ժողովուրդները հոն կ'արձանագրեն իրենց ներկայութիւնը:

Կանգ առնենք, մոռնանք, փառասիրութիւն եւ քաղքենիի հանգիստ, եւ ուշադրութեամբ մտածենք գերմանացի մեծ գրող Կեօթիի հետ, որ ըսած է. «Ազգի մը դատողութիւնը կազմուած կ'ըլլայ այն պահէն սկսեալ երբ ան կրնայ ինքզինք դատել: Բայց այս առանձնաշնորհումը ձեռք կը բերուի շատ ուշ» (ընդգծում՝ Յ.Պ.):

Դատողութիւն՝ որ կը սկսի ինքզինք դատելով: Միթէ՞ անկարող ենք մենք մեզ դատելու: Կամ եզրակացուցած ենք որ ուշ է արդէն եւ պատմութեան էջին վրայ տեղ պիտի չունենանք:

Այս հարցումը պէտք է ուղղել մեծին եւ պզտիկին, առաջնորդին եւ հետեւակին, եւ պատասխանել առանց դիրքապաշտութեան տուրք տալու, չգոհանալ ամբոխը ոտքի քնացնելու միտող խօսքի ճապկումներով, մի՛շտ ներսը եւ դուրսը: Զվարանիլ երբեմն ալ ըսելու՝ որ ճիշդ գնահատումներ չէինք ըրած, Կէօթէի «ինքզինք դատելու առանձնաշնորհումը» չէինք նուաճած, չենք նուաճած: Այդ չընելով պիտի մնա՞նք քաղաքական ընկեցիկ, ապրինք ասոր կամ անոր դուռը բախելով կամ անոնց շուքին ծուարածներ, անոնք ըլլան իւրային, բարեկամ, երբեմն ալ՝ թշնամի: Մի՛շտ պէտք է մտածել՝ որ ՎԱՂԸ ՄԻՇՏ ՈՒՇ Է: ԱՅՍՕՐ ԱՐԴԷՆ ՈՒՇ Է:

Յակոբ Պալեան

Հայրենիք

ՄՐԲԱԴԱՍՄԱՆ ԹԵԼԱԴՐԱԾ ԴԱՍԵՐԸ



Հայ առաքելական եկեղեցականներու շուրջ ստեղծուած անախորժ պատմութիւններն ու դատական հետապնդումները իւրայատուկ չեն միայն հայութեան, արեւմտեան զանազան երկիրներու մէջ եւս եկեղեցականներու դէմ ամբաստանութիւններ կը յարուցուին բանտարկութիւններ տեղի կ'ունենան:

Անհրաժեշտ է որ Հայ առաքելական եկեղեցւոյ մէջ եւս այդ գործընթացը սկսէր, որպէսզի եկեղեցականները վերաշահէին ժողովուրդին վստահութիւնը: Օր ըստ օրէ, դէպքերը ցոյց կու տան գայթակղութեան ծաւալը: Երեւոյթին քաղաքական շահարկումը կը դժուարացնէ իրավիճակը: Ասոր վերջին օրինակը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ ներկայացուցիչ Շահան արք. Սարգիսեանի հանդիպումն է վարչապետ Փաշինեանի հետ, որ փոխանակ հանդարտեցնելու կիրքերը, աւելի հրահրած է:

Բարեբախտաբար, դրական անակընկալ մը եկաւ Կաթողիկէ եկեղեցիէն: Ան սրբադասեց Հայոց ցեղասպանութեան նահատակ, Մարտինի հայ կաթողիկէ համայնքի առաջնորդ Իգնատիոս Մալոյեան սրբազանը: Յեղասպանութիւններու, մարդկութեան դէմ ոճիրներու եւ ցեղային զտումներու ներկայ դարուն, Կաթողիկէ եկեղեցւոյ այս քայլով հայ հոգեւորականը կը դառնայ հաւատքի, բարոյական արժեքի եւ անձնուիրութեան մարմնացում: Ա՛նկասկած, այս սրբադասումը այսուհետեւ միջազգային ուշադրութեան պիտի արժանանայ: Պէտք է յուսալ, որ Սուրբ Իգնատիոս Մալոյեան Հայաստանի մէջ ալ իր բարենպաստ ազդեցութիւնը ունենայ:

Հայաստանի համար բացառիկ է տեսնել թէ ինչպէ՛ս Իգնատիոս արքեպիսկոպոս Մալոյեան արժանացաւ Վատիկանի Ս. Պետրոս տաճարի հրապարակին վրայ 70.000 հաւատացեալներու ներկայութեան՝ ուրիշ վեց երանելիներու շարքին սրբադասումի,



բանալով Հայոց ցեղասպանութեան յիշատակին նուիրուած նոր էջ մը, որ ունի միջազգային հնչեղութիւն: Այսուհետեւ Ան պիտի ստանայ բոլոր կաթողիկէներու աղօթքները, հաւատացեալներ անոր միջնորդութեան ու բարեխօսութեան պիտի դիմեն, արժանանալու Աստուծոյ ողորմութեան:

Հայաստան եւս իբր քրիստոնէութեան հաւատքի անդրանիկ զաւակը, ունի՝ համայն քրիստոնէութիւնը համախմբող երկիր դառնալու կարողականութիւնը: Բայց պէտք է գիտակցի՝ այդ զօրութեան: Անոր չեն պակսիր ուխտատեղիները, մարտիրոսները, քրիստոնէական կոթողները: Առաջին հերթին Եկեղեցին ու եկեղեցականն է որ պէտք է գիտակցին այս երեւոյթին: Փրանկիսկոս պապը արդէն ազդանշանը տուաւ 2016ին Հայաստան այցելութեան ընթացքին՝ յայտնելով, որ հոն՝ քրիստոնէութիւնը ընդունած առաջին պետութիւն կու գայ իբրեւ ուխտաւոր:

Կաթողիկէ եկեղեցին իր սուրբերուն կարգին ընդունած է հայ սուրբերը՝ ինչպէս Ս. Գրիգոր Լուսաւորիչն ու Ս. Գրիգոր Նարեկացին: Մալոյեան առաջին ժամանակակից հայն է, որ կը սրբադասուի:

Հայութիւնը, Անիի անկումէն ի վեր սկսած է սփռուիլ աշխարհով մէկ. ինչպէս որ Սիսի Հայ առաքելական եկեղեցւոյ կաթողիկոսութիւնը յետեղեռնեան երկար թափառումներէ ետք հաստատուած է Անթիլիասի մէջ, նոյնպէս ալ Զմմառու Հայ կաթողիկէ եկեղեցին դարերէ ի վեր իր նստավայրը հաստատած է Լեռնալիբանանի մէջ եւ Մալոյեան վարդապետ ձեռնադրուած այնտեղ, առաքելութեան ուղարկուած է պատմական Հայաստան՝ Մարտին, ուր ալ մարտիրոսացած է: Ասով, Լիբանանի հետ հայութեան կապը կը ստանայ աւելի զօրաւոր նշանակութիւն: Այս տեսանկիւնէն՝ Լիբանանի նախագահին եւ Մարոնի ու Ասորի կաթողիկէներու պատրիարքներուն ներկայութիւնը սրբադասման արարողութեան՝ եղբայրութեան եւ եկեղեցական արժէքներու ընդհանրականութեան կարեւոր խորհրդանիշ է մա՛նաւանդ ներկայ ժամանակաշրջանի ազգայնականութեան, ցեղապաշտութեան եւ օտարատեացութեան երեւոյթներուն դիմաց:

Սրբադասման արարողութեան հրրաւիրեալ պաշտօնական անձնաւորութեանց կարգին էր,– Հայ առաքելական եկեղեցիներու ներկայացուցիչներուն կողքին,– նաեւ Հայաստանի վարչապետը, որ ունեցաւ պաշտօնական ու ջերմ շփումներ Հռոմի պապին եւ Հայ կաթողիկէ կաթողիկոս պատրիարքին հետ: Ուրիշ պարագայ մը պետութիւն-եկեղեցի ջերմ յարաբերութիւններուն:

ԺԻՐԱՅՐ ԶՈԼԱՔԵԱՆ

ՆՈՐ ՅԱՌԱՋ

22/11/2025

ՀԻՒՐԱՄԵԾԱՐՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԼԱՒ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Լիւսի Տօքսֆէճեան, Երեւան, 26 հոկտեմբեր 2025, ԳԵՂԱՐԴ



Հայաստանաբանակ հայրենակիցներուս հետ ունեցած պատահական շփումներուս մէջ, վերջին երկու տարուան ընթացքին յաճախ սկսած եմ լսել Թուրքիա կատարած իրենց զբօսաշրջային ճամբորդութիւններուն մասին: Խնդիրը այս երեւոյթին մէջ չէ, բան մը՝ որ բազմաթիւ հայեր գաղափարը կը մերժեն պարզապէս որովհետեւ երկրին ու ժողովուրդին հանդէպ թշնամութիւն կայ, մինչ ուրիշներուն նախասիրած ուղղութիւնն է Թուրքիան, այլ

խնդիրը կը կայանայ երկրէն եւ թուրք ժողովուրդէն իրենց ստացած տպաւորութիւններուն մէջ, ինչը կ'ուզեմ լուսարձակի տակ առնել:

Խօսակիցներս գովասանքով եւ հիացմունքով արտայայտուած են թուրք ժողովուրդին սիրալիր եւ հիւրասէր վերաբերմունքին մասին, ի զարմանս ինձ: Նաեւ յատուկ շեշտած են անոնց հիւրամեծարութիւնը, մինչեւ իսկ կարծիք յայտնելով, որ «անոնք քիչ է մնում շալախօ պարեն, հենց իմացան որ հայ ենք»:

Այս լսածներուս վրայ եկաւ աւելնալու պատահար մը, որ տեղիք տուաւ լրջօրէն վերլուծելու այս երեւոյթը:

Հանգստանալու նպատակով Հայաստանէն Ապու Տապի արձակուրդի մեկնած հայ ընտանիք մը, հիւրանոցի ընդունարանէն ներս մտած է երեխաներուն հետ հայերէն խօսելով: Ընդունարանի աղջիկ աշխատակիցին մօտենալով, եւ արաբերէն չիմանալու պատճառով, անոր բարեւած են անգլերէնով, մինչ աշխատակցուհին պատասխանած է հայերէնով ու հայերէնով շարունակելով՝ հարցուցած է անոնց որպիսութիւնը: Հայ ընտանիքը զարմանքով հարց տուած է օրիորդին հայ ըլլալուն մասին, որուն ի պատասխան վերջինս յայտնած է, որ թուրք է, ծնած ու ապրած Թուրքիոյ մէջ, բայց հայերէն կը հասկնայ: Խօսակցութեան ընթացքին պարզուած է, որ թուրք աղջկան հայերէն գիտնալուն եւ հայ մարդոցմով ուրախանալուն պատճառը անոր լիբանանահայ ափրեկանն է:

Ջրոյցի ընթացքին թրքուհին յայտնած է, որ կ'ապրի «ձեր նախկին Արարատի տարածքին մէջ» եւ շատ ուրախ է, որ «հայերուն մէջ կան մարդիկ, որոնք ժպիտով ու դրական կը վերաբերին» իրենց հետ, իմանալով հանդերձ որ իրենք ազգութեամբ թուրք են: Ու ան ցանկութիւն յայտնած է, որ իր սիրեկանին ծնողներն ալ նոյն ձեւով ընդունէին զինք, որոնք, իմանալով անոր թուրք ըլլալը, «այդքան ալ ուրախ չեն ու դէմ են մեր շփման»,– ըսած է հայագգի մեր հայրենակիցին թուրք ընկերուհին:



Ըստ երեւոյթին իր ընկերը շատ սիրող թրքագզի օրիորդը անմիջապէս արտայայտուած է, որ իր ընկերը շատ պատմած է հայերուն ու հայկական կենսակերպին մասին, որով իմացած է որ հայերն ու թուրքերը ունին նոյնանման բառեր, նոյնանման սովորոյթներ ու ճաշատեսակներ: Աւարտին, հարց տալով ու իմանալով, որ Ապու Տապի հասած մեր հայրենակիցները Թուրքիա չեն այցելած երբեւէ, թրքուհին խորհուրդ տուած եւ վերջիններս հրաւիրած է «իր հայրենիքը», որ, իր բնորոշմամբ, «սիրուն ու աւելի գեղեցիկ է քան Ապու Տապին»: Փոխադարձաբար, մեր հայաստանաբնակ հայրենակիցները Հայաստան հրաւիրած են հայ տղամարդ մը սիրող, Ապու Տապիի պանդոկի իրենց ջերմօրէն հիւրընկալած թուրք աշխատակցուհին, գալու եւ տեսնելու, թէ «հայերը այդքան վատ չեն ընդունում մարդկանց, ինչքան դուք էք պատկերացնում»:

Եւ իբր բարի կամքի դրսեւորում, թրքուհին հայ հիւրերուն սովորական ժամանակէն շուտ յանձնած է հիւրանոցային իրենց վերապահուած սենեակը ու երեխաներուն համար ուղարկած է նուէրներ՝ կարկանդակի տեսքով, յանձնարարելով անվարան իրեն դիմել կեցութեան ընթացքին որեւէ խնդրի հանդիպելու պարագային: Ու երբ մեր հայրենակիցները հարց տուած են, թէ ի՞նչ կրնան ընել այս լաւութեան դիմաց, թրքուհին ժպիտով պատասխանած է, որ շատ ուրախ է իր սիրելի մարդուն հայրենակիցներուն լաւ բան ընելու համար:

Հեքիաթանման ու ռոմանթիզմ բուրդով պատմութիւն մը, որ, սակայն, ամբողջովին իրականութիւն է: Այնպէս չէ որ թուրքի հետ նոյն կերպ վարուող հայեր չկան աշխարհի չորս ծագերուն, այնպէս չէ որ աննախադէպ է հայ մը սիրէ, ընկերանայ եւ նոյնիսկ ամուսնանայ թուրքի հետ, բայց նկատի ունենալով երկու ազգերուն միջեւ գոյութիւն ունեցող բազմադարեայ արմատացած թշնամանքը, այսպիսի երեւոյթներ մեծ հարցման նշաններ կը յառաջացնեն շատերու մօտ:

Անոնցմէ մին ալ ես եմ երեւի: Հայերու հանդէպ այս վերաբերմունքը հիւրասիրութեա՞ն, թէ՞ լաւ դիւանագիտութեան դրսեւորում է: Թուրքերը ունի՞ն պատճառ մեզ «այդքան» սիրելու կամ մեր հետ սիրալիր վարուելու, մինչ հայերուն ջախջախիչ մեծամասնութիւնը անկառավարելի ատելութիւն ու թշնամանք կը տածէ անոնց նկատմամբ, հիմնուելով գլխաւորաբար հայոց ցեղասպանութեան հանգամանքին վրայ, որուն համար Թուրքիոյ այժմու դեկավարութիւնը կը չքմեղանայ՝ ըսելով, որ ոչ թէ իրենք, այլ իրենց նախահայր օսմանացիներն են յանցագործները:

Պահ մը անտեսենք այն իրականութիւնը, որ թրքական մանաւանդ ծովային շրջանները հայերու, եւ ի մասնաւորի սփիւռքահայերու, նախընտրած ու մատչելի հանգստեան վայրերն են: Պահ մը նաեւ աչք խփենք այն իրողութեան վրայ, որ մեծ թիւով հայեր նոյնիսկ թրքական հագուստեղէնի վաճառքով կը զբաղին միջինարեւելեան իրենց երկիրներուն մէջ: Կ'երթանք Թուրքիա աշխատելու, հանգստանալու, ապրանք բերելու: Կ'երգենք թրքական եղանակներով երգեր, կ'ուտենք թրքական արտադրութեան ուտելիքներ, կը հագնինք թրքական հագուստ ու կօշիկ, կը դիտենք թրքական հեռուստաշարեր... ԲԱՅՑ, կարելորը, չենք մոռնար տարին մէկ անգամ թրքական դրօշակը վառելու, խանութներու պատերն ու


գետինները Թուրքիոյ մասին հայեցողից բառերով ներկելու, եւ նոյնիսկ Թուրքիոյ դէմ ցոյց ընողներու առաջին շարքերուն վրայ ըլլալու:

Այս հանգամանքները պահ մը մոռնալով ու վերադառնալով վերաբերմունքի թեմային, իմ մօտ այն տպաւորութիւնն է, որ թուրքերու սիրալիր եւ հիւրասէր մօտեցումը որդեգրուած դիւանագիտութեան արդիւնք է, որով աշխարհին կ'երեւան որպէս քաղաքակիրթ ժողովուրդ, որ օտարը կը դիմաւորէ ժպիտով, ջերմութեամբ եւ հիւրընկալութեամբ: Այսօր երբ հայերն անգամ գովասանքով կը խօսին թուրքերու՝ զբօսաշրջիկներու նկատմամբ հիւրասէր մօտեցման մասին, ուրեմն անոնք ա՛յս «սիրալիր» դէմքով է որ կը ներկայանան հանրութեան եւ կը թողեն դրական տպաւորութիւն: Եւ ներկայ դարու օտարներէն որո՞ւն հոգն է, որ հարիւրամեակ մը առաջ անոնք բարբարոս մարդասպան էին:

Հիւրամեծար ըլլանք, այդպիսով աւելի գրաւիչ ու հաճելի ենք, թէկուզ երբեմն ստիպուած, ձեւականօրէն ու դիւանագիտականօրէն. սա հազար անգամ աւելի լաւ է, քան հայաստանաբնակ հայերու ճակատին դժբախտաբար դաջուած՝ չոր, կարծր, ոչ-ձկուն, անշնորհակալ եւ ներողութիւն ըսել չգիտցող մարդու պիտակներ կրելը:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅՈՒՇԵՐԷՍ. «ԱՅՍ ՎԻՃԱԿԸ ԱՊԱԳԱՅԻ ՉԻ ՏԱՆԻՐ ՄԵԶ»

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԸԷՊԷՃԵԱՆ



Տոքթ. Ռոպեր ԸԷՊԷՃԵԱՆ

Իւրաքանչիւր ընտանիք ունի իր պատմութիւնը: Հայուն պարագային, մեր պատմութիւնը ունի իր իւրայատկութիւնները, որոնց մէջ տիրական են ցեղասպանութիւնը եւ տեղահանութիւնը: Մեր արմատները, որոնք սկսան պատմական Հայաստանէն եւ Կիլիկիայէն, տարածուեցան ամբողջ աշխարհի մէջ:

Իմ ընտանիքի արմատները կու գան Այնթապէն եւ Հասան Պէլլիէն: Դժբախտաբար ընտանիքիս աւելի քան 25 անդամներ կոտորուեցան Ատանայի ջարդերուն եւ 1915-

ի Ցեղասպանութեան ընթացքին, իսկ մնացեալը հասաւ Միջին Արեւելքի տարբեր երկիրներ: Մեծ ծնողքս ընտանեօք՝ հայրս մանուկ, հաստատուեցան Հալէպ, որմէ ետք հայրս ու մայրս անցան Պէրթոյ, ուրկէ ալ ընտանիքիս անդամները դարձեալ սկսան տարածուիլ քիչ մը ամէն տեղ: Սփիւռքահայու պատմութիւնն է, որ կը կրկնուի:



Հայրս՝ Վահէ Ճեպէճեան, դեղագործ էր, բայց երաժշտութիւնը իր ամբողջ էութիւնն էր: Ուրախ մարդ էր եւ կը ստեղծէր զուարթ տրամադրութիւն՝ ընտանեկան թէ բարեկամական հաւաքներու ընթացքին: Հօրեղբայրս՝ տոքթ. Ռոպէր Ճեպէճեան, մասնագէտ ակնաբուժ էր Հալէպ եւ ստեղծած էր իր անձնական հիւանդանոցը (որ մինչեւ այսօր տակաւին կը բանի) եւ ստացած յատուկ պետական արտօնագիր՝ շրջանաւարտ բժիշկներ պատրաստելու ակնաբուժական մասնագիտութեան մէջ:

Հօրեղբայրս լուրջ էր՝ խիստ դէմքով եւ շատ ուղղամիտ: Իր ներաշխարհին մէջ կար սերը արուեստի նկատմամբ, եւ իր ինքնութիւնը կը տրոփէր հայութեամբ եւ Հայաստանով: Հմուտ մտաւորական, որ շատ ժամանակ կու տար մատենագիտական եւ մամուլի ու պատմական արխիւներ պրպտելով եւ հաւաքելով: Ան ստեղծած էր իր գրադարանը՝ Հալէպ, ուր հաւաքած էր բազմաթիւ գիրքեր եւ մամուլի պարբերաբերքեր: Այս գրադարանը տակաւին կը մնայ Հալէպի մէջ:

Մանկութենէս դէպի պատանեկութիւն պիտի մեծնայի հօրս եւ հօրեղբորս երկու «ծայրայեղ» նկարագիրներու խաչմերուկին: Կը տեսնէի հօրս շէն կեանքն ու իր երաժշտական գործունէութիւնները լիբանանահայ գաղութին մէջ եւ, միւս կողմէ, հօրեղբորս մտաւորական, ազգային եւ հայրենի գործունէութիւնները, որոնց նկատմամբ տածած էր մեծ սէր եւ նուիրում:

Հօրեղբայրս մնաց Հալէպ, երբ իր զաւակները մեկնեցան Եւրոպա եւ Միացեալ Նահանգներ: Ան կառչած էր Հալէպին՝ որպէս սփիւռքահայ ամուր կռուանի, եւ ուներ համակ սէր ու նուիրումս Սուրիոյ հայրենիքին հանդէպ: Ես ալ մնացի Պէլքուր, երբ իմ երկու քոյրերս արդէն մեկնած էին Լիբանանէն:

Հայրս մահացաւ կանուխ, իսկ ասոր յաջորդեց մօրս կանխահաս մահը: Այս իմաստով հօրեղբայրս եղաւ ամուսնաւոր: Յաճախակիօրէն Հալէպ էի աշխատանքով եւ եկեղեցական ժողովներու համար, այդպէս ալ հօրեղբորս հետ յարաբերութիւնս եւ կապուածութիւնս ամրացան: Սկսայ հասկնալ իր ազգային եւ մտաւորական ներաշխարհն ու Հայաստանի նկատմամբ իր նուիրումը եւ սէրը: Այս բոլորէն անդին՝ կը սորվէի իրմէ շատ բան, նոյնիսկ երբ չէի համաձայներ իր բոլոր մտասէւեռումներուն հետ:

Հօրեղբորս համար Հայաստանը հայրենիք էր ու ամէն «գոյն»-է վեր: Ան միեւնոյն ժամանակ ուներ համոզմունք, ուր կը տեսէր Հայաստանի բարօրութիւնը, ապահովութիւնը եւ յառաջիկադացքը խորհրդային համակարգի մէջ: Ան ապրած էր Յեղասպանութիւնը եւ



տեղահանութիւնը: Տեսած էր հայ գաղթականներու վիճակը Հալէպի մէջ, եւ թէ ինչպէ՛ս անոնք համաճարակէ վարակուելով՝ կը մահանային ու կը թաղուէին հաւաքական փոս-գերեզմաններու մէջ: Ան այս բոլորը գրած է իր յուշերուն մէջ:

Հօրեղբօրս հետ հանդիպումներս ուէին նաեւ մտքերու փոխանակում: Միշտ չէ, որ կը համաձայնէի իր ազգային կեցուածքներուն ու հայեցակէտերուն հետ: Երիտասարդական տաքարին օրերուս մէջ էի եւ կը վիճաբանէի անոր հետ: Բժշկապետ-ուսուցիչ էր եւ կը քաջալերէր զիս, որ տեսակէտ ներկայացնեմ, նոյնիսկ երբ այդ տարբեր էր իրենիւնէն:

Հօրեղբօրս յարաբերութիւն-կապերը Հայաստանի հետ շատ ջերմ էին եւ հարազատ: Ան շատ մօտէն կը գործակցէր Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէին եւ անոր նախագահ Վարդգէս Համազասպեանի հետ: Տարին քանի մը անգամ կ'այցելէր Հայաստան եւ մեծ օժանդակութիւն ու նպաստ կը տրամադրէր: Կը սքանչանայի իր աշխուժ եւ նուիրական կեանքով, յատկապէս՝ Հայաստանի նկատմամբ:

1991 թուականին Հայաստան անկախացաւ, եւ խորհրդային համակարգը փուլ եկաւ: Հօրեղբայրս, ինչպէս սովոր էր, այցելութիւն մը տուաւ Հայաստան այդ օրերուն: Հայաստան իր քաղաքական, տնտեսական եւ ընկերային դժուար պայմաններուն մէջ էր: Ան վերադարձաւ Հալէպ եւ հետո ոչ մէկ բան բաժնեկցեցաւ իր այցելութեան մասին:

Զարմացած էի հօրեղբօրս «լռութեամբ»: Կ'ուզէի յարգել եւ չխանգարել անոր լռութիւնը, թէեւ կ'ուզէի հարցնել Հայաստան կատարած իր այցելութեան տպաւորութիւններուն մասին: Լաւ հասկցած էի անոր նկարագիրն ու տրամադրութիւնները եւ գիտէի, թէ որքա՛ն խորքային է անոր ներաշխարհը: Եկաւ օրը, երբ ուզեցի հարց տալ իրեն. «Ամմօ՛, ի՞նչ էր տպաւորութիւնդ Հայաստան այցելութեանդ, հիմա որ անկախութիւն ձեռք ձգեցինք»: Այդ օրերուն, բնականաբար, բոլորս ալ խանդավառ էինք նորանկախ մեր պետականութեամբ:

Հօրեղբայրս տեսաւ, թէ չէր կրնար այլեւս լուռ մնալ իր եղբօրորդիին հետաքրքիր աշխարհին նկատմամբ: Ես ալ լաւ գիտէի, թէ ան զուսպ անձ մըն է եւ բամբասանք բառը գոյութիւն չունի իրեն համար: Աչքերը ինծի յառեց եւ իր լուրջ դեմքով ըսաւ. «Այս վիճակը ապագայի չի տանիր մեզ»:

Զարմացա՞ծ էի, թէ՞ հիասթափած: Չկրցայ հասկնալ հօրեղբօրս արտայայտութիւնը, երբ բոլորս ուրախութեամբ տոգորուած էինք մեր անկախ պետականութեամբ:



Երիտասարդական տաքարին նկարագիրս մղեց զիս հակաճառելու: Ան մնաց լուռ եւ չուզեց աւելի խօսիլ:

Հօրեղբօրս համար այդ եղաւ իր վերջին այցելութիւնը Հայաստան: Անշուշտ կար իր տարիքը եւ այդ տարիքին պարտադրած ճամբորդելու սահմանափակումները: Բայց ան չգնաց:

Հօրեղբայրս երբեք կանգ չառաւ ազգային եւ մտաւորական իր աշխատանքներէն: Ան շատ աւելիով կառչեցաւ իր մատենագիտական աշխատանքներուն եւ լծուեցաւ հարստացնելու իր գրադարանի հաւաքածոն: Ան աւելիով զարկ տուաւ հայ-արաբ յարաբերութիւններու ամրապնդման եւ իր վերջին գործերէն մին եղաւ Սուրիոյ հայ բժիշկներու մեծ ներդրումը սուրիական հայրենիքի բժշկական կեանքի յառաջխաղացքին մէջ՝ արաբերէն լեզուով:

Հօրեղբայրս կը յառաջանար տարիքով: Առողջական վիճակը վատթարացաւ, եւ ստացաւ կաթուած: Հիւանդանոց փոխադրուեցաւ եւ հոն ունեցաւ արթուն-քնացած վիճակներ: Իր վերջին ուշքի վիճակին մէջ՝ հիւանդանոցի անկողինին քամուած, չմոռցաւ յիշեցնելու մեզի, թէ արաբերէն գիրքին մէջ կային սխալներ, զորս մեր ուշադրութեան յանձնեց, որպէսզի սրբագրուէին գիրքը հրատարակուելէ առաջ: Ան ապրեցաւ իր ազգային եւ հայրենանուէր կեանքը մինչեւ իր վերջին շունչը՝ առանց դադարի:

Հօրեղբայրս մահացաւ իր այդքան սիրած «Երագային Հալէպ»ի մէջ եւ թաղուեցաւ նոյնքան իրեն սիրելի Քեսապի Էքիզօլուք գիւղին մէջ: Բերիոյ թեմի այդ օրերու առաջնորդ՝ Երջանկայիշատակ Սուրէն արք. Գաթարոյեան, մեզի հետ կապ հաստատեց եւ պատրաստակամութիւն յայտնեց՝ կազմակերպելու «ազգային թաղում», եթէ կը փափաքէինք: Պարզ է, որ մեծապէս զգացուած էինք սրբազան հօր այս վերաբերումին եւ առաջարկին համար: Սրբազան հայրը ներկայ եղաւ հօրեղբօրս յուղարկաւորութեան պաշտամունքին, որ տեղի ունեցաւ Հալէպի Հայ աւետարանական Էմմանուէլ եկեղեցիին մէջ եւ արտասանեց իր սրտի խօսքը:

Յուղարկաւորութեան ընթացքին ինձմէ խնդրուեցաւ, որ յղեմ ընտանիքի խօսքը: Մէկ կողմէ՝ խեղդեցի արցունքներս, իսկ միւս կողմէ՝ խտացուցի հօրեղբօրս հետ ապրած կեանքս: Այդ խտացումին մէջէն տուի իմ վկայութիւնս. «Հօրեղբայրս մեզի սորվեցուց հայրենասիրութիւն եւ ազգասիրութիւն՝ անոնց արժէքի ամբողջական համակարգով»: Այս արժէքի գիտակցութիւնը կը շարունակուի մինչեւ այսօր:



Հօրեղբօրս հետ անցուցած օրերս եղան լեցուն եւ բովանդակալից: Այս օրերուն իր խօսքը՝ մեր այդ մէկ հանդիպումին ընթացքին, դարձեալ կը չարչրկէ միտքս ու հոգիս:

«Այս վիճակը ապագայի չի տանիր մեզ»:

Դժուար պիտի չըլլայ հասկնալ, թէ ինչո՞ւ հօրեղբօրս այս խօսքը՝ ներկայ մեր օրերուն, դարձեալ կը յիշեմ եւ մտահոգ տրամադրութիւններով: Մտահոգութիւնը մեր հայրենիքի ներկայ օրերու ապրած ճգնաժամն է:

«Այս վիճակը ապագայի չի տանիր մեզ»:

Ճի՞շդ էր հօրեղբայրս իր այդ օրերու ըրած մտայղացումին մէջ:

Պատասխան չունիմ եւ չեմ ալ գիտեր:

Բայց գիտեմ մէկ բան, որուն պատասխանը ունիմ:

Մեր ներկայ օրերու հայրենիքի այս վիճակը չի կրնար շարունակուիլ: Մենք պէտք է վերջ մը դնենք մեր ներքին առճակատումներուն, անհամաձայնութիւններուն, անմիաբանութեան ու՝ տակաւին: Այսօր ժամն է զգաստանալու: Ուշ ենք, այո՛, բայց, ոչ ուշացած:

Պետութիւն-իշխանութիւն, ընդդիմադիր բոլոր կողմերը, եկեղեցի, սփիւռք(ներ)ը եւ հայր: Ես, դուն եւ բոլորս: Պէտք է ու պիտի զգաստանանք բոլորս:

Պէտք է ու պիտի զգաստանանք բոլորս՝ ՄԻԱՄԻՆ, եւ պիտի տեսնենք, թէ ինչպե՛ս դուրս պիտի գանք այս «լաբիրինթոս» վիճակէն: Միասին շատ բան կրնանք ընել:

Եթէ պիտի ուզենք հայրենիքը պահել եւ ապագային համար զայն կերտել, այս պիտի նշանակէ, որ միասին այս վիճակէն դուրս գալու լուծումներ պիտի որոնենք:

«Այս վիճակը ապագայի չի տանիր մեզ»:

Բայց մենք կոչուած ենք ապագան կերտել եւ հայն ու հայրենիքը վաղուան օրուան համար պատրաստել:

Պիտի ընե՞նք:

Հոկտեմբեր, 2025

ՀԱՆԴԵՍ ՓԱՌԱՍԻՐՈՒԹԵԱՆ՝ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՎ



Մերթ Պարգել Դաւիթեան, Լուսաբաց, Թորոնթօ, 18 հոկտեմբեր 2025, ԳԵՂԱՐԴ

- Նախագահ Տանըլտ Թրամփի փառասիրութեան եւ ինքնահաւանութեան առջեւ խնկարկունները բազմաթիւ են: Անոր ոսկեգօծ երեւոյթներուն վրայ հիացող, ցեղապաշտ դիրքորոշումները հաւնող եւ զայն շրջապատող միլիառատերերու շքեղութենէ հարբող երկրպագուները կազմած են Ամերիկայի լայնքին ու երկայնքին տարածուող բանակ մը, որ կուրօրէն հետեւելով անոր զայն դարձուցած են բացարձակ մենատէր Ամերիկայի պէս ժողովրդավար երկրի մը մէջ:
- Այդ բանակի առաջին շարքերուն վրայ կանգնած են բարձրաստիճան պետական մարդիկ, որոնց տրուած են պաշտօններ ոչ թէ կարողութիւններու չափն ու մակարդակը նկատի առնելով, այլ Թրամփի հանդէպ անոնց կոյր հաւատարմութիւնը քննարկելով:
- Այդպիսի մարդիկ ստեղծած են վախի մթնոլորտ մը Ամերիկայի մէջ, ուր քինախնդրութիւն եւ վրէժխնդրութիւն կը տիրեն, եւ սարսափահար, խեղճ մարդիկ, որոնք Ամերիկայի մէջ նոր կեանք մը ապրելու տենչով ու երագով Ամերիկացիի քթին չորած գործերը (dirty work) կընեն, ստալիներէն բռնութեան օրերը յիշեցնող օրինակով կը ձերբակալուին ու կը խոշտանգուին:
- Թրամփեան յոխորտանքն ու հրմշտուկը (bullying) անցած է Ամերիկայի սահմանները եւ միջազգային բեմին վրայ նաեւ ունի իր փառասիրութեան ենթարկուող դերակատարները:
- Փառասիրութեան հանդէսը Թրամփի վերջերս ունեցաւ երեք արար.-
- Առաջին արարը Թրամփի փառասիրութեան խաղցուեցաւ 8 Օգոստոս 2025-ին Ուաշինկթընի մէջ՝ Թրամփի կողքին դերակատար ունենալով Ազրպէյճանի Ալիեւն ու Հայաստանի Փաշինեանը: Դերակատարները փայփայեցին եւ մեծարեցին Թրամփը անոր անունով կոչելու Հայաստանի հարաւով ապագային անցնող ճամբան որպէս TRIPP (Trump Route for International Peace and Prosperity): Փութինէն լքուած անգօր Փաշինեանը նստաւ Թրամփի գիրկը: Տայ Աստուած որ այդ արարով իրականանայ Հայաստանի ապահովութիւնը եւ այդ չղառնայ միայն նախագահ Տանըլտ Թրամփի փառասիրութեան ծառայող դէպք մը:



- Երկրորդ արարը Թրամփի փառասիրութեան խաղցունեցաւ 15 Օգոստոս 2025-ին Ալասքայի մէջ, ուր Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին եղաւ դերակատարը իր բարեկամ նախագահ Թրամփի կողմէ սարքուած հոլիվուտեան ցուցադրութեան կամ հանդէսին (Hollywood show): Ոչինչ կատարուեցաւ այդ հանդիպումէն ետք, բացի Թրամփի Նոպէլեան մրցանակ ստանալու իդձը գոհացնելու քայլ մը ըլլալէ:
- Երրորդ արարը Թրամփի փառասիրութեան եւ ցայտուն վերջնանուագը (finale) կատարուեցաւ 13 Հոկտեմբեր 2025-ին Եգիպտոսի Շարմ Էլ Շէյխ կոչուող ծովեզերեայ հանգստավայրին մէջ, որու դերակատարները շատ էին: Բոլորն ալ նախագահ Թրամփի պահանջին ենթարկուելով ներկայ էին այդ հաւաքին: Հոն էին այդ հանդիպումին հետ առնչուող եւ չառնչուող մարդիկ, որպէսզի Թրամփի ետին նստած՝ անոր փառասիրութիւնը շոյէին: Ի՞նչ գործ ունէին հոն եւ ինչո՞ւ առնչուած էին այդ խաղաղութեան ստորագրման արարողութեան հետ նախագահը Ազրպէյճանի, վարչապետները Հունգարիոյ, Հայաստանի, Փաքիստանի եւ շատ մը միւս ղեկավարները ոչ-արաբական կամ ոչ-միջինարեւելեան երկիրներու: Աշխարհի առաջ այդպիսի չառնչուող երկիրներու ներկայութիւնը պահանջելով՝ նախագահ Թրամփ ուզեց ցոյց տալ, որ ինքն է բացարձակ տէրն ու տիրակալը աշխարհի: Հոս ալ Թրամփ յոխորտաց, որ վերջ դրած է Միջին Արեւելքի մէջ մղուող պատերազմներուն, առանց բացատրելու, թէ ինչպէ՞ս կարելի էր վերջ տալ այդ հակամարտութեանց՝ առանց ճանչնալու պետութիւն մը ունենալու իրաւունքը պաղեստինցիներուն:
- Իսրայէլի Քնեսեթին մէջ նախագահ Թրամփ իր հիացմունքն ու հաւատարմութիւնը յայտնելէ ետք հոն նստող ամերիկացի հրեայ միլիառատէր Ատիլըն այրիին եւ ոճրագործ Նեթանիահուին, գնաց Եգիպտոս որպէս պաշտպանը Իսրայէլի շահերուն, անտեսելով ՄԱԿ-ի մէջ վերջերս 142 երկիրներու թեր քուէարկութեամբ վաւերացուած պաղեստինեան պետութեան մը ստեղծումին կարելորութիւնը: Կազայի մէջ պատերազմին վերջ դնող անոր դրական մասնակցութիւնը մակերեսային յաջողութիւն մը կարելի է սեպել՝ նկատի առնելով պաղեստինեան պետութիւն մը հիմնելու անոր բացասական կեցումը:
- Երեք արարով կատարուող հանդէսը Թրամփի փառասիրութեան գուցէ ծառայեց իրեն հետեւող կամ իրմով հիացող մարդոց նպատակներուն, սակայն այդ հանդէսը երբեք ազդեցութիւն չունեցաւ Նոպէլեան մրցանակ բաշխողներու որոշումին վրայ, որոնք անտեսելով անոր կողմէ այդքա՛ն ֆանֆառով ծրագրուած միջոցառումները ստանալու խաղաղութեան Նոպէլեան մրցանակը՝ զայն շնորհեցին ուրիշի մը:
- Ազնիւ ամերիկացիներն ու աշխարհը միասին, շունչերնին բռնած, պիտի տառապին երեք տարի եւս՝ ականատես դառնալով նման փառասիրական հանդէսներու, եւ պիտի ապրին շրջան մը, որ տարօրինակութիւններով լի պիտի ըլլայ նախագահ Թրամփի նախագահութեան ժամանակ:
- Յուսանք ու մաղթենք որ յաջորդ նախագահական ընտրութիւնները Ամերիկայի մէջ վերջ դնեն անոր բաժնող ու քանդող քաղաքականութեան եւ անոր վարչախումբը դուրս դրուի Սպիտակ Տունէն եւ աշխարհի բեմէն:

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈԻՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԻՄ ԱՇՆԱՆ

Եկար յուշիկ քայլերով,
Միրոյ վերջին նազանքով,
Բռնկումով ոսկեհուր,
Զերթ ծիրանի մայրամուտ...

Ու փռեցիր հրապոյրներ,
Գունեղ, նաշխուն տերեւներ,
Ինչպէս անուրջ լուսեղէն,
Դիւթանքով վառ, սիրահեւ...

Պատրանքովդ ես արբշիռ
Անգամ մըն ալ խենթեցայ,
Ոսկի թռչունն երազիս
Յայտնուեցաւ զերթ հեքիաթ...

Գիտեմ դարձեալ պիտ' երթաս,
Բայց հետքերուդ վրայ լոյս,
Երազս պիտ' յամենայ
Քաղցրահամբոյր որպէս յուշ...

25/10/2019



.....

ՉԳԻՏՑԱՅ

Չգիտցայ որ գիրս խոնարհ
Լոյս արահետ մը պիտ' քանար,
Ծառ ու ծաղկով վայելչանար,
Խորհրդալոյս կաճան դառնար...

Չգիտցայ որ թե՛ւ պիտ' առնէր,
Պիտի հասներ հեռու ասիեր,
Գտներ սիրտեր կարօտակէզ,
Հրավառէր լոյսի կայծե՛ր...

Ինչպե՛ս պիտի կըռահէի
Որ խոհն ու յոյզն իմ ջինջ, անեղծ
Պիտ' վարակէր բիւր, բիւր սիրտեր,
Դառնար մտքի, սրտի թրթիռ...

Ես պարզ մշակ գիր ու բանի
Հաւաքեցի բերքս խոնարհ,
Շաղախեցի սիրոյս անասի
Որ դառնար ան միրգ հիւթալի...

Բարձրեալն ի՛նքը բիրապատկեց,
Քամիներէն յար պաշտպանեց
Սիրտէս բխած խօսքը անկեղծ,
Զայն ընծայեց հիւթեղ միրգեր...

28/6/2017

.....

ԳԱՐՆԱՆ ՆՄԱՆ

Գրի՛չ իմ խոնարհ, գարնան նման դուն վարարէ՛,
Բիւր բողբոջներ, ծիւ ու ծաղիկ պայթի՛ն յանկարծ,
Բառ-ծաղիկնե՛ր հոսի՛ն, հոսի՛ն հրաշք աւիշէն
Եւ բռնկի՛ս ծաղկավարար դաշտին նման...

Ու մեղուներ թող պարս բռնեն ծաղիկներուդ,
Ըմպեն նեկտարն սիրատոյժո՛ր ու անյագո՛ւրդ,
Դուն բաշխուիս սիրող սրտով ու շռայլաբար
Եւ բաշխուելով շատնա՛ս, շատնա՛ս սիրավարար...

Հոսէ՛, հոսէ՛ գետակներուն պէս յորդառատ,
Մաքրէ՛ տիղմը հոգիներէն գորշ, ճահճացած,
Յոգնած մարդը գարնանանայ փրփրադէզ
Ու թե՛ րթ առ թե՛ րթ սիրտը բանայ բիւր ծաղկանց պէս:



7/5/2019

.....

ՀՈՂ ՀԱՅՐԵՆԻ

Դուն ես ծնո՛ւնդն ու սնո՛ւնդը Հայոց ազգի,
Քու ընդերքէդ խորախորհուրդ եւ սրբագին
Հայուն ծինն է աշխարհ եկեր ու ծաղկեր է,
Հօրացեր քու աւիշով ու տոկացեր
Հողմերուն բիր, մրրիկներուն կորստաբեր...
Դուն ես տուեր ոգի՛ ամուր ու աներեր,
Կա՛մք աննկուն, եւ հոգիի լո՛յս անուրջներ,
Խի՛ղճ մը արթուն, մաքրաջինջ ու անապական,
Այլեւ թո՛ի չք, ճախրա՛նք հոգուոյ վեհապագ,
Որ սաւառնի բարձունքներուն լուսագագա՛թ,
Տատասկներէն ու խութերէն վեր խոյանայ
Ու չընկրկի անդունդն ի վար խաւարամած...
Լուսահամը իր շրթունքին միւռոնագօծ
Լոյս ստեղծէ հողիդ վրայ լուսագորով,
Բերք ու բարիք ու կոթողներ հոգեհմայ,
Առաքինի վարք ու բարքեր, կեանք մը արդար...
Եւ հողիդ հետ է նոյնացեր դար ու դարեր,
Զայն կնքեր է Այբուբենովն իր հրաշագեղ,
Երգ ու տաղով Մեսրոպաշունչ, Մեսրոպահեւ...
Հողն ընծայեր է աղօ՛թք մը աշտարակուած,
Զերթ իր լեռներն են՝ Արարատ ու Արագած,
Աղօթքին մէջ շաղախելով հաւա՛տք անխախտ,
Մէ՛ր, յո՛յս ու լո՛յս, իր լուսապա՛շտ ոգին պայծառ...
Ու երբ ոսոխն է սպառնացեր իր սուրբ հողին,
Իր բորբ կուրծքով է դէմ դրեր միշտ քաջարի,
Կեա՛նքն է զոհեր, արի՛ւն տուեր որ ան մնայ
Եւ չդառնայ այլոց բաժին, չօտարանայ...
Զի առանց քեզ, հո՛ղ հայրենի, հայ չի մնար,
Կ'այլասերի հայու հոգին, լեզուն Հայկեան,
Ազգը դառնայ անդէմ զանգուած անդիմագիծ,
Փոշի ազգ մը ցրուած չորս կողմն ողջ աշխարհի:

24/8/2025

.....

ՏԷ՛Ր, ԾՆՈՐՀԷ՛

ՏԷ՛ր, շնորհէ ինձ երկո՛ւնք բարի,
Թող հե՛ւք առ հե՛ւք ես տանջուիմ,
Բայց թող ծնին երգերս ջինջ,
Երկունքս թո՛ղ պտղաբերի...

Տառապեալիդ գրա՛ սիրով,



Լոյսդ ցաթէ՛ ինձ շողակաթ,
Թող ես այրի՛ մ վառման հուրով,
Տողեր ծնի՛ մ ես սիրակաթ...

Պարգեւէ՛ ինձ կայծ ներշնչման,
Հովէն, ծովէն այցի թող գայ,
Բռնկեցնէ կաւս խոնարհ,
Բաժակ դառնայ լուսարարման...

Խոհերն անգամ վսեմափայլ
Գիտեմ կու գան ազատօրէ՛ն,
Թէ բռնանաս, ի չի՛ք դառնան,
Ազատութիւն անոնք տենչան...

Ազատ պահին կը յայտնուին
Անակնկալ ինչպէս քամին,
Կը փոթորկեն սիրտդ, հոգիդ,
Լուսէ երկունք են հրաշածի՛ն...

Թող արժանի դառնամ ես, Տէ՛ր,
Արարելու շնորհքիդ վսեմ,
Թէ չէ կաւս իմ հողեղէն
Պիտի փտի, կորչի անհետ...

7/6/2018

ՅԵՏ-ԵՂԵՌՆԵԱՆ ՄԵՐ ԵՐԱԽՏԱԻՈՐՆԵՐԷՆ

ՎԱՀԱՆ ՊԷՏԵԼԵԱՆ ԵՐԱԺԻՇՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

(Մահուան 35-ամեակին առիթով)



Եղեռնի դժոխքէն հրաշքով փրկուած փոքրաթիւ՝ մտաւորականներու փաղանգն էր որ նոր կեանք տուաւ՝ յետ-Եղեռնեան հայրենագուրկ արեւմտահայութեան կոտորակուած բեկորներուն: Զանոնք համախմբեց հայ Բառ ու Բանի, հայ երգ ու երաժշտութեան, հայ ազգային արեքներու ոգեղէն կամարին տակ, անոնցմով՝ վերապրելու յոյս ու յոյս ներշնչեց անոնց եւ՝ հպարտութիւն մանաւանդ, որուն կենսական կարիքը ունէին այդ խլեակները՝ «օղի, ջուրի, հացի» նման»...: Այդ

երախտաւորներն էին որոնք տքնեցան անվիատ, տուին անսակարկ, բաշխեցին ու բաշխուեցան անմնացորդ որպէսզի ապրէր հայը եւ, հողի անդարմանելի կորուստէն ետք, չխզուէր արեւմտահայութեան լինելութեան թելը:



Ազգահաւաքի, ազգապահպանման ու ազգակերտման մշակներ դարձան անոնք անխոնջ ու աննկուն՝ ձուլման ահեղ լափումին դիմաց, եւ կերպ ու ոգի տուին՝ աշխարհի չորս ծագերուն կազմաւորուող սփիւռքահայ գաղթօճախներուն:

Այս երախտաւորներու ազնուագոյն աստղաբոյլին մաս կը կազմէ վաստակաշատ երաժիշտ-խմբավարն ու մանկավարժ-ուսուցիչը Վահան Պետէլեան, որ կիպրահայ համայնքի մշակութային պատմութեան մեծագոյն կերտիչներէն մէկը եղաւ, դառնալով նաեւ հայրը կղզիիս երաժշտութեան:

2005 թուականին, ընթերցող հանրութեան կը հրամցուէր այս սքանչելի երաժիշտ-մանկավարժին կեանքն ու վաստակը ներկայացնող գիրք մը՝ «Վահան Պետէլեան Երաժիշտ Մանկավարժը» խորագրեալ, հեղինակութեամբը Անդրանիկ Տազեւեանի, հրատարակութեամբը Լիբանանի Մելգոնեան Կրթ. Հաստատութեան Սանուց Միութեան: Շնորհակալ աշխատանք մը՝ որ լիարժէք կը ներկայացնէ Վահան Պետէլեանի կեանքը, անոր վարքն ու բարքը եւ բեղուն վաստակը որպէս դպրապետը Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ, որպէս խմբավար ու մենակատար-նուագող եւ որպէս մանկավարժ-ուսուցիչ: Գիրքին մէջ տեղ գտած են նաեւ դասախօսութիւններ, վկայութիւններ եւ պատմական լուսանկարներ, որոնք առաւել ցայտուն կը դարձնեն իր դիմանկարը եւ կը լրացնեն անոր անաւարտ գիծերը:

Ո՞Վ Է՞Ր ՎԱՀԱՆ ՊԵՏԷԼԵԱՆ

Գիրքին էջերէն կը կարդանք որ Վահան Պետէլեան կը ծնէր 1894-ին Ատանա, ուր կ'անցընէ իր մանկութիւնն ու պատանեկութիւնը: Իր հօրը՝ Յարութիւն Պետէլեանի օրինակին հետեւելով եւ Սարաճեան դպրապետին քաջալերութեամբ, փոքրիկն Վահան վեց տարեկանէն եկեղեցի կը մտնէ իբրեւ դպիր: Այնքան կը սիրէ եկեղեցական շարականները, որ ամառները երբ այգի կ'երթային օդափոխութեան, ամէն Կիրակի մէկ ժամ կը քալէր որպէսզի կարենար շարական երգել եկեղեցւոյ մէջ: Այսպէս, երաժշտութիւնը կը դառնայ իր սրբութիւն սրբոցը եւ եկեղեցին հայկական՝ իր երկրորդ տունը: 13 տարեկանէն կը սկսի ջութակ սորվիլ Ալեքսան Զէօրէքճեանէն: Ապա 1909-ի Ատանայի ջարդէն փախչելով՝ տարի մը կ'ապաստանի Լառնագա: Վերադարձին, կ'երթայ Տարսոն, Ամերիկեան Սենթ Փոլզ Գոլէճը, ուր ուսման առընթեր մաս կը կազմէ դպրոցին նուագախումբին, յառաջացնելու համար ջութակի իր հմտութիւնը: 1915-ի Ցեղասպանութեան օրերուն, երբ կը տարագրուին Հալէպ, իր ջութակը ոչ միայն ապրուստի միջոց կ'ըլլայ իր ընտանիքին համար, այլեւ Եղեռնի մահաբեր գեհէնէն փրկուելու միջոց: 1919-ին կը վերադառնայ Ատանա եւ դարձեալ կ'երթայ Տարսոն իր ուսումը շարունակելու համար: Այնտեղ, Կարմիր Խաչի վարչութեան փափաքով կը կազմէ երկսեռ երգչախումբ մը եւ 1920-ի սկիզբը համերգ մը կու տայ փայլուն յաջողութեամբ:

Ուսումը Բ.Ա. վկայականով աւարտելէ ետք, 1920 թուականի Յունիս 3-ին կը դառնայ Ատանա, հօրը օգնական ըլլալու համար: Հոս կը կազմէ «Նուագասիրաց Միութիւն»ը եւ անոր նուագախումբը, Կիլիկիոյ մէջ երաժշտութիւնը տարածելու ազնիւ մղումով: Առաջին եւ միակ նուագահանդէսը տեղի կ'ունենայ 1921-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ Երջանկայիշատակ Տէր Սահակ Կթղ. Խապայեանի հովանաւորութեամբ եւ կը ստեղծէ մեծ խանդավառութիւն:

Ֆրանսացիներու Կիլիկիոյ պարպումէն ետք, 20 Նոյ. 1921-ին՝ կ'ապաստանի Կիպրոս, իր ընտանիքին հետ միասին, նախ՝ Լառնագա, ապա՝ Նիկոսիա: Կիպրոսի Առաջնորդ, Տէր Պետրոս Արք. Սարաճեանի հրաւերով, կը դառնայ դպրապետը Նիկոսիոյ Ս.Աստուածածին եկեղեցւոյ եւ շուտով կը կազմէ 60 հոգիից երգչախումբ մը, զայն պատրաստելով Ս.Պատարագի Եկմակեան երգեցողութեան՝ 1922-ի Ս.Ծնունդին: Այնուհետեւ, տարեկան բազմաթիւ համերգներով հանդէս կու գայ այս երգչախումբը՝ «Եւրոպական երաժշտութիւնը ծանօթացնելով հայերուն եւ հայկական երաժշտութիւնն ալ օտարներուն»:



1922-էն՝ կը ստանձնէ Ազգային Մելիքեան Վարժարանի վերի երկու կարգերուն երգի եւ ջութակի դասերը, եւ 52 երկար տարիներ կը ծառայէ, նոյն դպրոցին մէջ հիմնելով փողերախումբ եւ նուագախումբ մը:

1927-ին, Կիպրոսի անգլիացի նոր կառավարիչը Սըր Ռոնըլտ Սթոյգ կը հրաւիրէ Պէտէլեանը ջութակի եւ փշողական գործիքներ դասաւանդելու իր հիմնած Cyprus School of Music-ի մէջ: Իբրեւ ուսուցիչ կը հրաւիրուի նաեւ Յունական երաժշտանոցին կողմէ: Նոյն թուականէն սկսեալ, 13 տարիներ երաժշտութիւն կը դասաւանդէ եւ փողերախումբ կը պատրաստէ նաեւ Թրքական Լիւսէին մէջ:

Համերգային ծաւալուն գործունէութեան զուգընթաց, մանկավարժական բեղուն գործունէութիւն կը տանի ան տքնաջան յարատեւութեամբ՝ «մէկ դպրոցէն միւսը...առանց վայրկեան մը կորսնցնելու...»: Ան ծնած էր երաժշտութեան համար: Իր կեանքը կը սկսէր ու կը վերջանար երաժշտութեամբ: Իրեն համար, երաժշտութիւնը «հրեշտակներու լեզուն » էր, «մարդկային յառաջդիմութեան եւ հոգիի ազնուացման» ստոյգ ազդակը, որ պէտք էր ի սպաս դնել ժողովուրդին:

1932-էն սկսեալ, Պէտէլեան կը ստանձնէ Մելգոնեան Կրթկական Հաստատութեան երաժշտութեան դասերը, 35 տարիներ ծառայելով այնտեղ, եւ բազմաթիւ համերգներ տալով Հաստատութեան երգչախումբով, փողերախումբով եւ նուագախումբով, միշտ փայլուն յաջողութեամբ եւ մեծ խանդավառութիւն ստեղծելով հայ թէ օտար հանրութեան մօտ:

1947-ին, երբ Լուլու Սիմէոնիստու կը հիմնէ Կիպրոսի Ազգային Երաժշտանոցը, Վահան Պէտէլեան կը հրաւիրուի իբրեւ ջութակի ուսուցիչ եւ 32 երկար տարիներ կը մնայ այդ պաշտօնին վրայ:

Մեծ է թիւը հայ, յոյն եւ թուրք երաժիշտներու, որոնք իրենց ասպարէզին ամուր հիմը կը պարտին այս մեծ ուսուցիչին: Նշենք անոնցմէ՝ Սեպուհ Աբգարեանը, Մանուկ Բարիքեանը, Հրաչ Գասպարեանը, Հրանդ Գեորգեանը, Նիկողոս Թահմիզեանը, Յակոբ Մանուկեանը, Արա Որսկանեանը, Լեւոն Զիլինկիրեանը, Յարութիւն Պէտէլեանը, Նուպար Սնկըրեանը եւ շատ ուրիշներ...

Վահան Պէտէլեանի երաժշտական եւ մանկավարժական 70-ամեայ հարուստ վաստակը ըստ արժանւոյն կը գնահատուի հրապարակային հանդիսութիւններով՝ Կիպրոսի Կրթ. Նախարարութեան թէ Կիպրահայ Ազգային Իշխանութեան նախաձեռնութեամբ: Նմանապէս՝ Գահակալութեան Շքանշանի «Coronation Medal»-ի տուչութեամբ՝ 2 Յունիս 1953-ին եւ Կիլիկեան Ասպետի Շքանշանի պարգևատրումով՝ 12 Յունիս 1968-ին, Ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի:

Գիրքին էջերէն կը յառնէ Վահան Պէտէլեան Մշակը, որ անմնացորդ բաշխեց ու բաշխուեցաւ: Մշակ՝ որ իր երաժշտական հունտերը սերմանեց ամէնուն, հաւատալով որ «Երաժշտութիւնը հոգիին սնունդն է...հոգին կ'ազնուացնէ»: Տակաւին հաւատալով որ «Երաժշտութիւնը ոյժ մըն է, որ կրնայ իր շուրջ բոլորել անմիաբան հայը...քանզի անոնք որոնք կրնան միասին երգել, կրնան միասին ալ գործել»:

Այս հաւատքով ու գիտակցութեամբ գործեց Վահան Պէտէլեան՝ հոգեւոր անսպառ կորովով, բարութեամբ ու համեստութեամբ, անշահախնդիր ոգիով եւ անանձնական սիրով՝ հայոց եկեղեցին, հայ դպրոցը եւ հայ մատղաշ հոգիները ռոտգելով հայ երգ ու երաժշտութեան կենարար հնչիւններով, միաժամանակ ստանձնելով կղզիին երաժշտական հայրութիւնը: Իր սրտին այնքան մօտ էր Թէքէեանի «Աստուծոյ» բանաստեղծութիւնը, ուր բանաստեղծը կ'ըսէ. «Եւ ահա հունձքն՝ երկու ափիս մէջ պարփակ...Ամբողջն այս է, զայն քեզ սիրով կ'ընծայեմ»:

Վահան Պէտէլեան ամբողջ սրտով այդ հունձքը տուաւ իր ժողովուրդին եւ համայն կղզիին ազնուագոյն մշակի մը գերագոյն նուիրումով: Տալով ապրեցաւ եւ ապրեցուց: Բարձրացաւ եւ բարձրացուց:

Էջ առ էջ, Անդրանիկ Տազեսեան կը կառուցէ յուշարձան-մատեան մը ի յիշատակ եւ ի պատիւ մեծ մշակին ու երաժիշտին որ կոչուեցաւ ՎԱՀԱՆ ՊԷՏԷԼԵԱՆ:

Փա՛ռք եւ խոնարհո՛ւմ իր յիշատակին:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

«ԹՈՉՈՂ ՀԱՅՐԻԿԸ». ԹԱՏԵՐԱԽԱՂ ՄԸ՝ ՈՒՐ ԾԻԾԱՂԸ ԿԸ ԹՈՉԻ ԱՌԱՆՑ ՈՏՔԻ



✉ ՎԱՐՈՒԺ ԹԷՆՊԷԼԵԱՆ

18/10/2025



Վաչէ Ատրունիի նոր թատերգութիւնը՝ «Երջանիկ մարդուն անցեալը («Անտոք թոչունը») երկու արարներէ բաղկացած այս զուարճալի ողբերգութիւնը կը շօշափէ ընտանիքի եւ յիշողութեան ձգած վերքերը եւ կը խոստովանի այն, ինչ որ երկար ատեն չենք համարձակած արտասանելու. անտարբերութիւնը նոյնքա՛ն կործանիչ է, որքա՛ն մահը:

Գործողութիւնը կը ծաւալի ժամանակակից բնակարանի մը մէջ, ուր տարեց հայր մը՝

Ղուկասը, յիշողութիւնը կորսնցուցած է եւ, անակնկալօրէն անհետանալով, կը մղէ իր գաւակները՝ Գարեգինը, Սահակը եւ Անահիտը միաժամանակ դէմ առ դէմ գալու իրենց վախերուն ու շահախնդրութեանց: Մինչ խնամատար Աստղիկը՝ տան լուռ եւ խիղճ ունեցող կինը, կը փորձէ զսպել քառսը, տան մէջ կը բացուի այլափոխութիւն մը, ուր խնամքը կը վերածուի պարտականութեան, իսկ պարտականութիւնը՝ ձանձրոյթի:



Երբ Ղուկաս կը վերադառնայ գիշերանոցով, բոպիկ, ձեռքին հին հովանոց մը եւ դատարկ ճամպրուկ մը, կը պարզուի, որ իր բացակայութիւնը խորքին մէջ աւելի փախուստ մըն էր ոչ թէ տունէն, այլ՝ խելքէն: Ան կը խօսի մանկութեան հեքիաթի մը մասին՝ անտոք թոչունին, թոչուն մը որ ոտք չունի եւ կը պտըտի երկինքին մէջ՝ առանց երբեք իջնելու: Այդ պատկերով կը բացատրուի ամբողջ թատերախաղին ներքին շղթան. մարդը որ մոռցած է, բայց դեռ կը սիրէ, դադրած է պատկանելէ այս աշխարհին ծանրութեանց:

Ատրունի այս թատերախաղը կը կառուցէ հակադրութիւններով: Այն ինչ որ դուրսէն ծիծաղելի է՝ խորքին մէջ ողբերգական է: Թէեւ բեմին վրայ յաճախ կը լսուին վիճաբանութիւններ ժառանգութեան,

ստորագրութիւններու եւ օրէնքի շուրջ, իրական բեմը անոնց խղճին մէջ է: Անոնք կը խօսին



հայրենիքի, բարեկեցութեան եւ պատիւի մասին, բայց մոռցած են ամենէն պարզ իրողութիւնը՝ մարդուն հոգին կը ծերանայ ոչ միայն տարիքով, այլ անտարբերութեամբ:

Գործող անձինք

Ղուկաս – Յիշողութիւնը կորսնցուցած հայր մը, որ կը կ'երերայ իր ներքին եւ արտաքին աշխարհներուն միջեւ: Իր մոռացութիւնը ունի հանգստացնող խորք մը. ան է միակ կերպարը, որ իր կորուստին մէջ կը գտնէ խաղաղութիւնը:

Անահիտ – Զգայուն, մեղմ, երբեմն կասկածոտ. ան կը տատանի մեղքի եւ կարեկցանքի միջեւ:

Գարեգին – Օրէնքի մարդը, որ կը կարծէ թէ կարգուկանոնով կրնայ պաշտպանել մարդկային արժանապատուութիւնը, բայց իր իսկ սառնասրտութեամբ կը չարաշահէ զայն:

Մահակ – Որոշ, գործնական եւ անսպառ ծաղրախօս մը: Ան կը մարմնաւորէ ժամանակակից «գործնապաշտ» մարդը, որ ամէն ինչ կը չափէ օգտակարութեամբ:

Աստղիկ – Խնամատարը, որ կը դառնայ տան խիղճը: Իր պարկեշտ եւ դառն խօսքերով, ան կ'ապացուցանէ, որ բարոյական բարձրութիւնը երբեմն կ'ապրի տան խոհանոցին մէջ, ոչ թէ սեղանին շուրջ:

Մորիս – Փաստաբանը, որ բեմին վրայ հագուադէպ կ'երեւի, բայց ներկայ է իբրեւ խորհրդանիշ՝ օրէնքի անզգայ եւ անտարբեր ուժին:

Աստղիկի բարկացած մենախօսութիւնը կը դառնայ թատերախաղին բարոյական գագաթնակէտը: Ան բացայայտօրէն կ'արտայայտէ այն, ինչ որ հանդիսատեսը մինչ այդ լուռ պիտի զգայ, որ գաւակները, իրենց հայրը՝ փրկելու ճիգին մէջ, կ'լանուած են ինքնարդարացումով՝ մոռնալով, թէ դեռ կայ մէկը՝ կենդանի, որ կը լսէ զիրենք:

Այն պահուն, երբ թատերախաղը կը հասնի իր աւարտին, հանդիսատեսը ինքն իրեն պիտի հարցնէ՝ ի՞նչ կը նշանակէ սիրել մէկը, երբ ան այլեւս մեզ չի ճանչնար:

Վաչէ Ատրունիի «Երջանիկ մարդուն անցեալը» գործին մէջ, ծիծաղն ու դառնութիւնը կը գոյակցին առանց միմեանց ջնջելու: Ան կը յիշեցնէ մեզի, որ երջանկութիւնը երբեմն կը յայտնուի ոչ թէ գիտակցութեան, այլ այն աշխարհին մէջ, ուր իրերը կը դադրին անուն ունենալէ: Ղուկասը, որ խենթ կը կարծուի, կը դառնայ միակ ողջ մարդը, որովհետեւ կրցած է մոռնալ:

«Թոշող հայրիկը» անուանումով, Ատրունիի այս թատերախաղը շուտով բեմ կ'ելլէ նախաձեռնութեամբ ՀԲԸՄ-ՀԵԸ-ի «Վահրամ Փափազեան» թատերախումբին, բեմադրութեամբ՝ Վազգէն Մուղալեանի: Ներկայացումները տեղի կ'ունենան 31 հոկտեմբերին, 1, 2, 8 եւ 9 նոյեմբերին, Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ:


Այս թատերախաղը լեցուն է ծիծաղով, բայց այդ ծիծաղը պարզ գուարճանքի համար չէ, թէեւ շատեր այս ներկայացումը պիտի դիտեն միայն գուրաճանալու համար: Ատրունին կ'օգտագործէ զայն իբրեւ բարոյական գործիք՝ քանդելու համար մեր ինքնապաշտպանութեան մեքանիզմը:

Շատեր հաւանաբար պայթին ծիծաղէն, բայց ընդհանարապէս պիտի ժպտան այնպիսի պահերուն, երբ իրենց կեանքին ծանօթ տիւմարութիւններն ու անտարբերութիւնը կը դառնան բեմական պատկերներ: Ներկայացումը կը խնդացնէ, բայց նաեւ կը բացատրէ, թէ ինչո՞ւ կը ծիծաղինք:

Եւ ահա այդ կ'ըլլայ հեղինակին իսկական յաղթանակը, երբ ծիծաղը նաեւ կը վերածուի գիտակցութեան:

ՁԵՌՆԱՐԿԻ ՍԸ ՀԵՏՔԵՐՈՎ

ԳԵՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ



Նոյեմբերի առաջին շաբաթավերջին, Հայ մշակոյթի ամսուան առթիւ, գաղութիս «Նոր Սերունդ» մշակութային միութիւնը կազմակերպած էր հայերէն գիրքերու ցուցահանդէս- վաճառք մը, Փասսատինայի իր կեդրոնէն ներս:

Այս առթիւ, յատուկ հրաւերներ ուղարկուած էին շրջանի գրողներուն եւ գրավաճառներուն, որպէսզի մասնակից դառնային այս նախաձեռնութեան: Համեստօրէն ըսեմ, որ իբրեւ տասնեակ մը հատորներու հեղինակ, ցուցահանդէսին մասնակից դառնալու հրաւերը ինծի ալ դրկուած էր եւ մեծ ուրախութեամբ ընդունած էի:

Ու մինչեւ սրահ հասնիլս, հայ գիրի ու գրականութեան, մշակութային միութիւններու աշխատանքներուն, հայ ընթերցողի եւ հայերէն գիրքի յատուկ մտահոգութիւններու մասին, ես ինծի տեսակ մը վերաքննութեան ենթարկելով հարցաքննած էի, քննադատած նաեւ վեր առած մեր ապրած այս գաղութէն ներս նման ձեռնարկի մը էականութիւնը, այժմէականութիւնը, ծրագրումն ու անոր դրական եւ գործնական ներկայութիւնը:

Ապա, քիչ անց, սրահէն ներս, ցուցահանդէսին մասնակից դարձող գրչնկերներու ու մանաւանդ ընթերցասէր եւ հետաքրքիր այցելուներուն հետ մէկ կողմէ խօսած, եւ միւս կողմէ ալ մտիկ ըրած էի հայերէն գիրի ու գրականութեան, եւ մանաւանդ հայերէն գիրքը փրկելու պարտաւորութիւններուն եւ պարտականութիւններուն մասին:



– Ինչո՞ւ սակայն նման նախաբան,- հաւանաբար ըսէր ընթերցողը: Միտքս պարզեմ:

Որովհետեւ, այս օրերուն, կը զգամ եւ տեսանելի ալ է, որ գիրքը, հայերէն գիրքը, վտանգաւոր տագնապ մը կ'ապրի: Կրնամ նաեւ աւելցնել, թէ ան յաճախ ալ մնացած է անտեսուած ըլլալու չափ անարձագանգ:

Իրականութիւն է որ բոլորիս առօրեայ կեանքի բազմազան մտահոգութիւնները, եւ անոնցմով բեռնաւորուած հարցերը, կը կրծեն մեր ժամանակը: Ահա թէ ինչո՞ւ մեզմէ շատեր իրենց անհոգութեան, անտարբերութեան ու «գունաւոր» ու «անգոյն» նման պատճառաբանութիւններէն մեկնած, հեռացած են հայերէն գիրքէն, անոր ընթերցման հաճոյքէն, անոր հին ու նոր կանչերէն:

Այլ խօսքով եւ բացառութիւնները միշտ յարգելով աւելցնեմ, որ տեսանելի է թէ ինչպէ՞ս Սփիւռքի տարածքին ապրող այսօրուան հայ մարդը ինքզինք «կտրած» է, հեռացուցած եւ մեկուսացուցած է հայ գիրքէն, հայ լեզուէն, եւ յաճախ ալ՝ հայ մտածողութենէն:

Ըսի բացառութիւնները յարգուած են: Բայց լաւ պէտք է գիտնալ որ բացառութիւններով կարելի չէ ազգն ու իր մայրենին պահել եւ փրկել: Որովհետեւ, այս բացառիկները բաւարար թիւ-քանակ չեն կազմեր իրենց դէմ վագող հսկայ հոսանքին ուժգնութիւնը դիմադրելու:

Ճիշդ է որ չենք կրնար անտեսել մեր միութիւններու, կազմակերպութիւններու, դպրոցներու, հայ կեդրոններու այս հոսանքին դէմ մղած ճիգերը: Նաեւ, չենք կրնար անտեսել անոնց՝ նոր սերունդը փրկելու յատուկ, մեծ ու յարատեւ ճիգերը, զանոնք մտքով, մարմնով եւ հոգիով հայ պահելու ծանր աշխատանքները: Երբեք:

Բայց... անկեղծօրէն ըսեմ՝ Ամերիկայի մէջ հայերէն գիրքը շուկայ չունի: Իմ կարծիքով, հայերէն գիրքը ո՛չ միայն շուկայ չունի, նոյնիսկ շուկայ ունենալու անոր ապագայի յոյսը պղտոր է: Որովհետեւ շուկան կը զարգանայ, եթէ գոյութիւն ունենայ հայերէն գիրք ընթերցող-կարդացողներու զանգուած: Իսկ այսօր, կրկնութեան գնով յիշեցնեմ, որ ամէն տեղ, հայ աշակերտ, հայ ծնողք, հայ մարդ, դժբախտաբար ո՛չ հայերէն կը խօսի, ո՛չ կը կարդայ, եւ ո՛չ ալ հայերէնով կը գրէ: Ցաւալի իրականութիւն...:

Կը կարծեմ որ նման ճշմարտութիւններ ճակատաբաց պէտք է երեւան բերել, արեւի լոյսին յանձնել, որպէսզի մարդիկ կարենան լաւապէս տեսնել, հասկնալ եւ գոնէ՝ ինքնագիտակցիլ: Մի՛ մոռնաք որ հայ գիրին, գիրքին եւ գրականութեան ապահովումն ու տարածումը եւս Հայ Դատին մաս կը կազմէ:



Նաեւ պէտք է յիշել, թէ հայ գիրքի ցուցահանդէս-փառատօն-վաճառքի պարագային, հայ մշակութասէրը, ընթերցասէրն կամ պարզ այցելուն, ո՛չ միայն հին ու նոր հրատարակուած հայերէն գիրքերու կամ հայ օտարագիր գրողներու ստեղծագործութիւններուն կը ծանօթանայ, այլ՝ աւելի մօտէն նաեւ կրնայ հայ գրիչին հանդիպիլ, գրուցել, մօտէն ճանչնալ հայ հեղինակը, գրագէտը, բանաստեղծն ու մտաւորականը: Այս ձեւով, հայ գրող-հեղինակ մէկ կողմէն, իսկ միւս կողմէ ալ հայ ընթերցող-անհատ կապը կ'ըլլայ կենդանի եւ օգտակար, հետաքրքրիք եւ նպատակայարմար:

Կար ժամանակ, որ շատերու տուններէն ներս, հայ գիրքի ներկայութիւնը պաշտամունքի աստիճան դառնալով, մեզի նոր ու տարբեր շունչ տուած էր: Ու մենք ալ, այդ օրերուն, իբրեւ նոր սերունդի ժառանգորդներ, անկէ ներշնչուած, վերապրած էինք: Ու հաստատօրէն հայերէն գիրքերը մեր դիմաց բացած էին գրական նոր դռներ, մտքերու գեղեցիկ լուսամուտներ, որոնց շնորհիւ գրողի ճաշակն ու ոճը ընկալած էինք մեծ հաճոյքով եւ նոյնիսկ՝ օրինակուած:

Ու պատիւ իրեն, պէտք է նաեւ յիշել, որ հայ ընթերցասէրը, ամէն պատեհ առիթով, հայ գիրքի ընթերցումը փնտռած է, որպէսզի իր միտքն ու հոգին ալ լիցքաւորուէին հայութեամբ, որպէսզի հայու իր դիմագիծն ու արեան բաբախումը ապահով մնային:

Իսկ այս օրերուն, կասկածէ դուրս է, որ մեր նոր սերունդին նման «ժառանգ» փոխանցելու պատասխանատուութիւնը, պարտականութիւնն ու պարտաւորութիւնները նախ կ'իյնան եւ անպայման հայ ծնողքի վիզին, ապա հայ վարժարաններ յաճախող աշակերտին, ինչու չէ անոր հայերէն լեզուի ուսուցիչին, նաեւ հայ տղուն կամ աղջկան պատկանած միութեան կամ կազմակերպութեան ուսերուն:

Արդ, ի տես այդ օրուան, այդ գեղեցիկ եւ օրինակելի նախաձեռնութեան, իբրեւ հայ մտքի համեստ մշակ, հայ գիրն ու գիրքը փնտռող, անոր գուրգուրացող եւ տարածող գրիչ, կը մտածեմ որ մեր բոլորի ուժերուն ներած չափով եւ տարողութեամբ, գոնէ տարին անգամ մը պէտք է կազմակերպուի հայ գիրքի ցուցահանդէս-փառատօն-վաճառք մը: Եւ այս աշխատանքը, կը կարծեմ որ նաեւ կ'իյնայ գաղութէն ներս գործող բոլոր մշակութային միութիւններու ուսերուն վրայ: Ցուցահանդէս մը, որ քիչ մըն ալ իր կարկինը լայն բանալով, նաեւ ընդգրկէ շրջանի հայ հրատարակչատուները, հրատարակիչ տպարանները, հեղինակ գրիչներու ստեղծագործութիւններու կողքին:

Տակաւին աւելցնեմ... Մշակոյթի ամսուան իբրեւ գործնական եւ օգտաշատ միջոցառում՝ նման ցուցահանդէսին հայկական վարժարաններու աջակցութեամբ ալ, անպայման կազմակերպել աշակերտներու այցելութիւնները:

Հաւատացէ՛ք...չեմ ուզեր ինքզինքս դասել միամիտ երագողներու ցանկին մէջ, այլ միայն ու միայն այս բոլորին գործնական իրականացումը անմեղօրէն կ'ուզեմ ակնկալել...:

bedig43@aol.com

ԿԱԼԹԵՂ ՄԸ ՄԱՐԵՑԱԻ: ՅԻՇԱՏԱԿՆ ԱՆՄԱՀ՝ ՏՈՔԹ.ԱՐՄԵՆԱԿ ԵՂԻԱՅԵԱՆԻՆ

13/11/2025



Այսօր մեր ժողովուրդը կորսնցուց իր նուիրեալ գաւակներէն՝ Տոքթ. Արմենակ Եղիայեանը՝ արեւմտահայերէն լեզուի ջերմ պաշտպան, մտաւորական, գիրքերու հեղինակ եւ խիզախ հրապարակագիր: Մասնագիտութեամբ բժիշկ էր, բայց կոչումով՝ ուսուցիչ ու դաստիարակ, իսկ էութեամբ՝ հայ մարդ մը, որ իր ամբողջ կեանքով ապրեցաւ հայերէնի շունչին եւ մեր ազգային ինքնութեան մէջ: Անոր կորուստով՝ այսօր հազիւ մատի վրայ կարելի է հաշուել արեւմտահայերէնի մասնագէտները:

Տոքթ. Եղիայեանը երկար տարիներ աշխատակցեցաւ հայ մամուլին, յատկապէս՝ «Ազդակ» օրաթերթին: Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ էր՝

նուիրուած մեր մշակոյթին, կրթութեանն ու հայապահպանութեան: Ան մեծ աւանդ կը ձգէ հայերէն լեզուին ուսուցման, քերականութեան եւ գրականութեան ոլորտին մէջ՝ ըլլալով լեզուաբան, հեղինակ դասագիրքերու, արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական եւ ոճաբանական ուղեցոյց, հայերէնը սիրող եւ դասաւանդող կամաւոր ուսուցիչ:

Տոքթ. Եղիայեանը եղաւ այն հագուագիւտներէն, որոնք ամբողջ կեանքով վկայեցին, թէ արեւմտահայերէնը ոչ միայն հաղորդակցութեան լեզու մըն է, այլ՝ հոգեւոր տուն, ազգային յիշողութիւն եւ մեր ինքնութեան վերջին պաշտպանը: Ապրեցաւ խոնարհութեամբ, աշխատեցաւ անսահման նուիրումով եւ սորվեցուց սէր՝ ոչ միայն բառին, այլ նաեւ հոգիին:

Ինծի համար՝ ան աւելի քան մտաւորական մըն էր: Տոքթ. Եղիայեանը եղաւ այն մարդը, որ սովորեցուց սիրել արեւմտահայերէնը՝ իր խորքով, իր գեղեցկութեամբ, իր հոգեւոր շունչով: Իրմէ սորվեցայ, որ լեզուն միայն բառերու ժողովածու չէ, այլ՝ ազգի յաւերժութեան աւիշ:

Այսօր կ'ապրիմ մեծ վիշտով, բայց նաեւ հպարտութեամբ, որ ճանչցած եմ նման անձնաւորութիւն մը՝ իր մաքուր մտքով, ազնիւ հոգիով եւ անսահման նուիրումով: Անոր անունը պիտի մնայ ոսկէ տառերով գրուած արեւմտահայերէն լեզուի պատմութեան մէջ, եւ անոր ձայնը պիտի շարունակէ հնչել իբրեւ յորդոր, պատգամ եւ սիրոյ երգում դէպի մեր մայրենի լեզուն: Անոր թողած ժառանգութիւնը՝ գիրքերն ու ուղեցոյցները, թելադրական յօդուածները պիտի մնան լուսաւոր ուղի՝ արեւմտահայերէնի պահպանութեան:

Աստուած խաղաղութիւն պարգեւէ անոր հոգիին, եւ իր թողած լոյսը վառ մնայ մեր մէջ՝ իբրեւ անմար ճրագ եւ յիշատակ յաւիտենական:

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏԸՄԵԱՆ

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Աշխարհը տակաւ կը դառնայ մեծ շուկայ մը, ուր առեստուրի առարկայ են երկիրներ, հայրենիքներ, տարածքներ, ուր մարդիկ ապրեր, արարեր, ստեղծագործեր են դարձել դար, հազարամեակէ հազարամեակ: Երեսուն արծաթով թէ բիրտ ոյժով կը սպառնան քեզմէ խլել հայրենի հողդ, որ նաեւ ՈԳԵՂԷՆ տարածք է, ուր կան արմատներդ, նախնեացդ քրտինքը, արիւնն ու աճիւնը: Սա է արդեօ՞ք քսանմէկերորդ դարու իբրեւ թէ «լուսաւոր» դէմքը: Խորքին մէջ եւ ըստ էութեան՝ ընչաքաղց, նիւթապաշտ, հոգեզուրկ, ազգային ինքնութիւն եւ արժանապատուութիւն կոխկոտող, պատմութիւն ու մշակոյթ համաձուլելու միտող ԳԱԶԱՆԱԲԱՐՈՅ դարը, ուր ՄԱՄՈՆԱՆ տէրն է կացութեան եւ կը տնօրինէ կեանքեր ու ճակատագրեր:

.....

Առանձնութեանդ մէջ երբ մեկուսանաս, խոհ-ապրումներուդ մէջ կողիացած, տիեզերքին հետ կը նոյնանաս, կ'ընդարձակիս սահմանազանց...Մինչ ժխորին մէջ աղմկարար, դուն քեզ կը փնտռես անյուսօրէն, կը փոքրանաս, կը կծկուիս եւ տիեզերքն ալ կը կորսնցնես...Մարդկային հոգին տիեզերքին կը բացուի, զարմանալիօրէն, երբ հեռու ենք ժխորէն, աղմուկ-աղաղակէն եւ անխանգար:

.....

Անօրեայ մանր, գծուծ հարցերը կ'անհետին երբ աշխարհը կ'ընկալես համապարփակ հայեացքով, ուր վերջինները փոքրիկ հիւլէ մը անգամ չեն տիեզերական ամբողջութեան



մէջ...Իսկ այդ մանրութները որքան կը սպառեն մեր ներուժը, ամպի ծուկներ կը ստեղծեն մեր ներաշխարհէն ներս, մեր հոգիի մաքուր երկինքը կը մշուշապատեն յաճախ...Բայց երբ վեր կը բարձրանաս այդ մանրութներէն եւ կ'ընկալես համայնը, հոգիդ կ'ընդլայնի, կ'ընդարձակի եւ կարծես կը նոյնանայ տիեզերքին հետ: Մշուշը կը փարատի լայնահորիզոն տեսադաշտիս վրայ...

.....

Երբ մեծութեան մը քով կ'ապրինք, չենք ալ նկատեր զայն, երբեմն զայն կը ժխտենք, նոյնիսկ կը հալածենք զայն՝ մեր բամբասանքներով, մեր չարախօսութեամբ: Յետոյ, երբ ան ա'լ չկայ, կ'աւաղենք, կ'ափսոսանք եւ կը մեծարենք անոր բացակայութիւնը...: Չեմ գիտեր թէ ինչո՞ւ է այդպէս...Բայց լեռան մը բարձրութիւնն անգամ կը նշմարենք, երբ հեռուն կը դիտենք զայն:

.....

Երջանկութիւն է բեկոր մը ճառագայթ ըլլալ խաւարին մէջ մոլորեալին, պճեղ մը անուշ սիրտ՝ տառապեալին, յոյս սփոփարար՝ անմխիթար մորմոքողին, զօրավիզ ու զօրակից՝ մենաւորին, հոգեմտաւոր սնունդ ու մանանա՝ ոգիի սովէն տոչորողին...: Երջանկութիւնը միշտ ալ անանձնական է, եթէ նկատի չունենանք այն խորունկ հոգեկան գոհունակութիւնը, զոր կը խորապրի զայն տուողը...:

.....

ԽՂՃԻ ՁԱՅՆԻՆ միայն ունկնդիր ըլլալը մեծագոյն ԱԶԱՏՈՒԹԻՒՆ է, քանզի ան ամբողջովին քեզ կ'ազատագրէ՝ այլոց գնահատանքին, ազնուութեան, երախտիքին սպասելու ամէն ակնկալութենէ...ՍԵՓԱԿԱՆ ԽԻՂՃԸ կ'ըլլայ բուն թելադրողը վարքիդ, արարքներուդ, գործունէութեանդ, անո՛ր միայն կ'ըլլաս պատասխանատու եւ հաշուետու, եւ կը վարձատրուիս՝ ոչ միայն խղճի հանդարտութեամբ, այլ նաեւ ճակատագրիդ ՏԷՐԸ ըլլալու, ազատ ու անկախ ըլլալու ներքին մեծ գոհունակութեամբ...: Այլոց վարքէն եւ արարքէն կախեալ ըլլալը տեսակ մը ՍՏԴԿՈՒԹԻՒՆ է:

.....

Մենք չկրցանք ՊԵՏԱԿԱՆ մտածելակերպը ձերբազատել ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԷՆ:
Մենք չկրցանք ԵԿԵՂԵՑԻՆ վեր պահել ՔԱՂԱՔԱԿԱՆ պայքարներէն՝ սփիւռքի մէջ թէ հայրենիքի:
Մենք չկրցանք ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈԳԻՈՎ մտածել ու գործել ինչ կը վերաբերի ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒՆ:
Մենք ծառին ետեւ չկրցանք տեսնել անտառը, քանզի շատ նեղ էր մեր հայեացքը:
Մենք չկրցանք ՄԻԱԲԱՆՈՒԻԼ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԻՆ եւ ԱՐԺԷՔՆԵՐՈՒՆ ՇՈՒՐԶ:
ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ՀԱՅՐԵՆԻՔԸ, ԵԿԵՂԵՑԻՆ, ՄՇԱԿՈՅԹԸ չեն կրնար եւ պէտք չէ ՄԻԶՈՑ ծառայեցնել ՆԵՂ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ պայքարներու եւ նկատառումներու:
Եւ վերջապէս, մենք չկրցանք ԴԱՍԵՐ ՔԱՂԵԼ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ ԵՒ ԻՄԱՍՏՆԱՆԱԼ:

.....



Ի՞նչ տեսակ պետութեան մասին կարելի է խօսիլ, եթէ ան չունի ազգային դիմագիծ, պատմական յիշողութիւն, եթէ զուրկ է ան զայն կանգուն պահող արմատներէ... Ի՞նչ տեսակ պետութեան մասին կարելի է խօսիլ, երբ այլոց սպառնալիքի տակ ան պատրաստ է հրաժարելու իր ինքնութեան հիմնասիւններէն... Ի՞նչ տեսակ պետութեան մասին կարելի է խօսիլ, եթէ ան պատրաստ է ուրանալու իր բոլոր պատմական իրաւունքները, իր անցեալը եւ ապրիլ միայն իր ներկայով, իր ներկայ գոյութեամբ ի հաճութիւն իր թշնամեաց... Նման պետութիւնը կը դառնայ սոսկ խրտուիլակային գոյութիւն եւ ոչ ԼԻԻՐԱԻ, ԼԻԱՐԺԷՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

.....

Երբե՛ք չեն սիրած զելի ու շուայտ կեանքը, զիս չեն հրապուրած եւ չեն հրապուրեր աւելորդ եւ սին պերճանքն ու սնափառ հորթերը ոսկեայ... Կը պաշտեմ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ, երբ անիկա ՆԵՐԴԱՇՆԱԿ Է ՀՈԳԻԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ հետ, կը մարտնչիմ ամէն տեսակ տգեղութեան դէմ, բնութեան աղաւաղումին, մարդկային հոգիի, մտքի եւ սրտի եղծումին, խօսքի, վարքի եւ արարքի տգեղութեան դէմ... Ի՞նչ կ'արժէ ամէնէն մեծ ու շքեղ դրեակը, երբ անոր մէջ կը տիրէ ՉԱՐՈՒԹԻՒՆԸ իր ահաւոր տգեղութեամբ:

.....

«Ի ՍԿԶԲԱՆԷ ԷՐ ԲԱՆՆ»... Այսպէս է գրուած բոլոր ժամանակներու մեծագոյն Մատեանին մէջ, որովհետեւ ամէն ինչի սկիզբը միտքն է, որ կ'արտայայտուի խօսքով եւ գիրով, ապա՝ կը վերածուի արարքի կամ գործի...: Խօսքի առաքեալներ են գրչի մարդիկ՝ գրողներ, լրագրողներ...: Խօսքը, սակայն, կ'այլանդակուի եւ կը դառնայ սուտի ու կեղծիքի գործիք, եթէ ան չարտայայտէ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ, եթէ գրողը չդառնայ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԳՐԵԱԼԸ, այլ՝ սոսկ հատուածի մը քարոզչամեքենան եւ ուղեղալուացումի գործիք:

Երան Գույումճեան

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Աշնան դալուկ տրտմութեան մէջ
Ես ոսկեգօծ ծառը տեսայ,
Որ անյագուրդ արեւ կ'ըմպէր
Վերջին շողքովն իր կ'արբենար...

.....

Թէ սրտիդ մէջ գարուն չըլլայ,
Աշնան բոցերն ինչպէ՞ս տեսնես,
Թէ սրտիդ մէջ անապատ է,
Ինչպէ՞ս տեսնես հեքիաթն աշնան...

.....

Ու կը շտապեն արագ-արագ,
Տրորելով ծաղիկ ու սիրտ,
Եւ չես գիտեր ո՞ւր պիտ' հասնին
Կոխկոտելով գանձերն իրաւ...

.....

Եւ ո՞վ պիտի դատէ գիրդ,
Ո՞վ պիտ' կարդայ հոգիդ, սիրտդ,
Մարդիկ հիմա շատ են զբաղած,
Սին վայելքով են արբեցած...

.....

Գանձէն, դիրքէն վեր ու անդին,
Մարդու մէջ մարդն ես փնտռեցի,
Հոգիով ջինջ, սիրտով անկեղծ,
Աւա՛ղ, նիւթով էր շնչահեղձ...

.....

Շատերը զիս լուռ լքեցին
Ու հեռացան տխուր, յուշիկ,
Անոնց պէտք չէր ճշմարիտը,



Այլ նեղ շահին սպասարկելը:

.....

Արմատախիլ բոյս մը եղայ
Օտար ու խորթ հողին վրայ,
Գի՛ր մայրենի, քե՛զ կառչեցայ,
Հողիս բոյրն ու թոյրը եղար..

.....

Ներքին ձայնիդ լոկ վստահե՛
Աղմուկին մէջ ահագնաձայն,
Ուղեցոյցդ ա՛ն թող ըլլայ
Զերթ Աստուծոյ ձայնը անվրէպ..

.....

Սրտիդ խինդը բաժին հանե՛
Ծանօթին ու անծանօթին,
Ցաւդ միայն քեզի պահե՛,
Ամէն մարդ ալ իր ցաւն ունի...

.....

Կեանք է, կու գայ, կ'անցնի, կ'երթայ,
Բայց թէ հունտեր ցանես բարի,
Մարդիկ կ'օրհնեն հունձքը արդար,
Լոյսի շող մը հասնի քեզի...

.....

Ըսած ու չըսած բառերուս միջեւ սիրտս մղկտաց ու յար հեծեծեց,
Ըսուա՞ծն էր արդեօք սրտիս հայելին, թէ՞ բուն միտք բանին չըսուածին մէջ էր...
Ըսուածը գուցէ այլոց համար էր, լոյսի մէկ շող էր որ այլոց հասաւ,
Լոյսի ակունքը թաքնուած մնաց չըսած բառիս մէջ, հոգւոյս որպէս գանձ...

.....

Համակ կեանք մը կարծես կ'ապրինք սպասելով վաղուայ օրուան,
Լուսահեղեղ արշալոյսին որ պիտ' ծագի վարդաբուրեան,
Պիտ' պսակէ իղձերը մեր, երագներուն մարմին պիտ' տայ,
Կը փախցնենք այսօրն, ներկան, համակ կեանք մը տենդով սպասման...

Երան Գույումճեան